

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ 2023

HANDES AMSORYA 2023

Հրատարակումը է Գալուստ Կիլյանկյան Հիմնարկությանն անջատված

This publication has been subsidized by Galouste Gulbenkian Foundation



ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԳԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼԷ. ՏԱՐԻ 2023

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅՈՑ ՔՈՎ

Հ. Եփրեմ Պողոսյան

Բ. ՄԱՍ
ՀԱՐՍԱՆԻՔԸ ՆՈՐ ԾՐՋԱՆԻ
ՀԱՅՈՑ ՔՈՎ¹

Նոր շրջանը ըսելով կը հասկնամ ժԸ.-
Ի. դարերը:

Հոս նպատակ ունինք Հայկական
հարսանիքը ներկայացնել ամեն մեկ տեղի
եւ շրջանի սովորութեամբ՝ տալ իւրաքան-
չիւր քաղաքի եւ գիւղի մէջ եղած Հայ ժո-
ղովրդի սովորութիւնը, որքան կրցած ենք
նիւթ հաւաքել այդ մասին:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԾՐՋԱՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՎՐԱՅ

Իւրաքանչիւր քաղաքի եւ գիւղի սո-
վորութեան մասին խօսելէ առաջ, կ'ու-
զէինք նախ տալ ընդհանուր տեսութիւն
մը նոր շրջանի Հայ ժողովուրդի հարսա-
նեկան սովորութեան քանի մը հանդիսա-
կան եւ աչքառու կէտերու մասին, որոնք
բոլոր Հայերու հասարակաց են եւ ընդհա-
նուր ու կենդրոնական նշանակութիւն ու-

նին եւ պայման են օրինաւոր ամուսնու-
թեան մը համար:

ԳԼՈՒԽ Ա.

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՔԸ

Քանի՞ տարեկանին կրնայ Հայ ման-
չը, Հայ աղջիկը ամուսնութիւն կնքել:
ԺԸ.-Ի. դարերուն Հայ ժողովուրդը երեք
օտար պետութիւններու – Օսմանեան
կայսրութեան, Ռուսաստանի եւ Պարսկաս-
տանի – ենթարկուած ըլլալով՝ անոնց
ամուսնական օրէնքները որոշ չափով
պարտաւորիչ էին նաեւ Հայերու համար:

Օսմանեան մահմետական Շերիաթի
օրէնքով ամուսնութիւն, որ օրինաւոր էր
մահմետականներու համար, օրինաւոր էր
նաեւ ոչ-մահմետականներու համար: Չա-
փահասութեան տարիքը կախում ունէր հոն
ամուսնացողի ֆիզիքական զարգացումէն:
Եթէ ամուսնացողը ունի ֆիզիքական զար-
գացում բաւարար որդեծնութեան համար,
ամուսնութիւնը թոյլ կը տրուի տղուն Հա-
մար 12 եւ աղջկան համար 9 տարեկանին:
Սակայն եթէ չկայ ֆիզիքական հասունու-
թեան վկայութիւն, ամուսնական չափահա-

1 Ա. մասը տե՛ս «Հանդէս ամսօրեայ» 2022, 1:



182-2023

սուրբիւնը կը համարուի երկու սեռի համար ալ 15 տարին լրացած²:

Սակայն հայ եկեղեցական կանոնը, երկու սեռերու համար ալ, չափահասութեան օրինաւոր տարիք կը համարէր 15 տարին: Արդէն 1811-ին հրատարակուած պատրիարքական կոնդակ մը կը ճշտէր. «Պսակելի փեսային պարտ է լինել տասնեւհինգ տարեկան եւ հարսն տասնեակու տարեկան եւ աստի փոքրն մի՛ պսակեսցի»³:

Անչափահաս ամուսնութիւններու առջեւն առնելու համար Կ. Պոլսոյ պատրիարքը 1880-ին մասնաւոր հրահանգ մը հրատարակելով՝ չափահասութեան տարիքը կը ճշտէր մանչուն համար 20 եւ աղջկան համար 18 տարին, իսկ բացառիկ պարագային թոյլ կու տար մանչուն 18 եւ աղջկան 16 տարին⁴: Ռուսաստանի պետական օրէնքը Անդրկովկասի բնիկ ժողովուրդներու համար ամուսնական չափահասութեան տարիք որոշած էր մանչուն 15 եւ աղջկան 13 տարին: Այդ օրէնքին կցուած յաւելուածը տեղական առաջնորդներուն իրաւունք կու տար, հարկաւոր պարագաներուն, կէս տարի ալ պակսեցնելով թոյլ տալ ամուսնութիւնը⁵:

Պարսկաստանի մահմեդականներու մէջ երկար ատեն պահուած էր հին սովորութիւնը, որուն համեմատ ամուսնութիւնը թոյլ կը տրուէր մանչուն համար 10 եւ աղջկան համար 6 տարեկանին, բայց ամուսինները պիտի սպասէին մինչեւ իրենց հասունացումը: Սովորական չափահասութիւնը սակայն կը համարուէր ռանչուն համար 14 եւ աղջկան համար 12 տարին: Հայերը ստիպուած էին իւրացնել պարսիկներու -ուրիշ սովորութիւններու

հետ- նաեւ չափահասութեան օրէնքը, բայց Առաջնորդները կ'աշխատէին խափանել մատաղահաս ամուսնութիւնները մասնաւոր հրահանգներով, որոնք սովորաբար կը սահմանէին տղուն 16-18 եւ աղջկան 14-16 տարին⁶:

Եթէ նկատի առնենք հայ ժողովուրդի քով գործադրուած սովորոյթը, հոն պիտի տեսնենք ոչ միայն մատաղ հասակի մէջ կնքուած ամուսնութիւններու դէպքեր, ինչպէս, օրինակի համար, Պարտիզակ, ուր 7-8 տարեկանին նշանուք կը կատարուէր⁷, այլ եւ օրօրոցի խօսք-կապեր (պեշիկ-քերթմէ), ինչպէս Ալաշկերտ⁸, Զէյթուն⁹ եւ այլն:

Վերջինս կ'երեւայ թէ շատ բարձր հնութիւն ունեցած է հայ ժողովուրդի խաւերուն մէջ, որովհետեւ արդէն ԺԹ. դարու սկիզբը հարկ տեսած է պատրիարքական կոնդակ մը խստիւ արգելել զայն. «Անմեղ մանկանց ամուսնութեան անընդունակ տղայոց խօսքկապն, այսինքն «պեշիկ-քերթմէ» կոչեցեալն, բնաւ մի՛ լիցի, զի արգելեալ է յաստուածային կանոնաց»¹⁰: Հայ ժողովուրդի մէջ կանուխ ամուսնացնելու համար սովորոյթը ունեցած է նաեւ պատմական խոր եւ ստիպիչ պատճառներ: Ասոնցմէ մին կը յիշէ Մսեր Մսերեանց պատմելով Ղուկաս կաթողիկոսի (1780-1799) կենսագրութիւնը. «Յաւուրս սորա կամ եղեւ եղբօր արքային Պարսից տալ ժողովել վասն իւր օրիորդս յազգէ Հայոց: Ի լսել զայս Ղուկասու, հրաման արար ամուսնացուցանել զամենայն աղջկունս Հայազգիս գտեալս ի սահմանս Երեւանայ յուրթամենից եւ ի վեր. որով եւ զերծոյց զնոսա ի վտանգէ: Զի ընդ զալ յուզել խնդրակաց ի տունս, ոչ զոք ի նոցանէ

2 «Փորձ», VIII-IX, Տիփլիս, էջ 77:
3 Կանոնական Կոնդակ Հարսանեաց, Կ. Պոլիս, 1811, էջ 6:
4 «Փորձ», անդ, էջ 78:
5 Անդ, էջ 78-79:

6 Անդ, էջ 79:
7 «Մասիս», Կ. Պ., 1873, թ. 1356:
8 «Արեւելք», Կ. Պ., 1899, թ. 3949:
9 «Բիւզանդիոն», Կ. Պ., 1902, թ. 1693:
10 Կոնդակ Հարսանեաց, էջ 6:

զտին անառագաստ: Եւ այս եղեւ յաւուրս աղուհացից, յորս արգելեալ են հարսանիք ըստ եկեղեցական կանոնաց»¹¹:

«Մանկահաւաք»-ը հարկապահանջութեան մեկ տեսակն էր. «Ժողովուրդը պարբերաբար հարկ պիտի տար որոշուած թուով 8 տարեկանէն վեր կայտառ եւ գեղեցիկ երեխաներ երկու սեռէ: Որովհետեւ պսակուածներուն չէր կարելի դպչիլ, ուստի հոգեւոր իշխանութիւնն իմանալով հարկահաններու մօտալուտ գալուստը՝ իսկոյն կը կարգադրէր նշանակուած հասակի բոլոր երեխաները պսակել որի հետ որ պատահի, մինչեւ իսկ քրոջը՝ եղբօր հետ: Այս արհաւիրքներու յիշողութիւնը տակաւին կենդանի է ծերերու պատմութեանց մէջ»¹²:

Ուր այդ վտանգը չկար, կը ջանային եկեղեցական իշխանութիւնները արգելել անչափաս եւ մանկահասակ ամուսնութիւնները: 1874 Հոկտ. 18 թուականը կրող Պոլսոյ Ազգ. Կենդ. Վարչութեան Կրօնական Ժողովի մեկ պաշտօնական տնօրէնութիւնը կը յայտարարէ. «Շրջաբերականներ ուղղուեցան առ ամենայն առաջնորդս վիճակաց եւ վանահարց եւ հրաւիրուեցան անչափահասներու ամուսնութիւնը խստիւ արգելել եւ պսակ չդնել տալ արուին, որ 20 կամ գոնէ 19 տարւոյ հասակը չէ լրացուցած եւ աղջկան՝ որ 16 կամ գոնէ 15 տարին չէ լրացուցած»¹³:

ԳԼՈՒԽ Բ. ՀԱՍ – ԶՀԱՍ

Ամուսնութեան մէջ կարեւոր պայման մը կայ, որուն համեմատ ամուսնութիւնը կարելի եւ օրինաւոր, կամ անկարելի եւ ապօրէն կրնայ ըլլալ: Ատիկա մանչուն եւ աղջկան միջեւ արեւակցական կամ խնամական կապն է: Մինչեւ ո՛ր աստիճանի

11 Մսեր Մագիստրոս Մսերեանց, Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի. Մոսկուա, 1876, էջ 9:
12 «Մաղիկ», Կ. Պ., 1892, թ. 19, էջ 218, ծանօթ. 1:
13 «Հայրենիք», Կ. Պ. 1874, թ. 222»:

արեւակցներ կամ խնամիներ կարող են իրարու հետ ամուսնութիւն կնքել: Այս բացատրութիւնը հայ ժողովրդի մէջ մտած է «հաս-չհաս» բառերով: «Հաս» է, եթէ ազգականական կամ խնամական կապը օրինաւոր կամ կանոնական սահմանին մէջ է, այսինքն՝ ամուսնութիւնը արգելող ազգականական մօտաւոր աստիճան չկայ. «չհաս» է, եթէ եկեղեցական օրէնքով արգելուած ազգականական մօտաւոր աստիճան մը կայ:

Արդ, Հայ եկեղեցին ազգականական քաներո՞րդ աստիճանը թոյլատու կը համարի ամուսնութեան համար:

Առանց մանրամասնութեան իջնելու յիշենք պատմական քանի մը տուեալներ.

1. Շահապիվանի Ժողովը (447-ին) իր ԺԳ. կանոնով կը սահմանէ. «Մինչեւ ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեսցէ առնուլ»: Այսինքն՝ արեւակցական մինչեւ չորրորդ աստիճան արգելուած էր ամուսնութիւնը:

2. Դուրիսի երկրորդ ժողովը (527-ին) իր ԻԲ. կանոնով կ'որոշէ. «Վասն զազգական կին առնույ ցհինգերորդ մի՛ իշխեսցէ եւ զչորրորդն ապաշխարեսցէ»: Ուրեմն, մինչեւ հինգերորդ աստիճան արգելուած էր, իսկ եթէ մեկը չորրորդ աստիճանով ամուսնութիւն կնքած էր, պատժի ենթարկուելով պէտք է ապաշխարէր:

3. Ներսէս Շնորհալի (1166-73) կը գրէ. «Մի՛ ոք համազգեսց, որոց արեւան մերձաւորութիւն իցէ, պսակ օրհնութեան դիցէ, այլ մինչեւ ի յերկուց կողմանցն զչորրորդ ազգին գլխաւորութիւնն կատարեալ ունիցի»¹⁴:

4. Սոյ երկրորդ ժողովի (1243-ին) է. կանոնը կ'ըսէ. «Զպսակն ընտրութեամբ

14 Թուղթ ընդհ. էջ 84:

արասցեն վեց ծննդովք հեռացեալ յագ-
գակցութենէ արեան»¹⁵:

5. Գրիգոր Տաթևացիի ժամանակ
(Ժ. Դ. դար) չորրորդ աստիճանը թոյլ չէր
տրուած, այլ հինգերորդը միայն: Նա կը
գրէ. «Ոչ լինին խնամիք մինչ ի Դ. (4-րդ)
ծնունդն ... լինի նոցա ի Ե. (5-րդ) ծնունդն
խնամութիւն»¹⁶: Հայ եկեղեցին ԺԹ. դա-
րուն կաթողիկոսական կոնզակներով
վերջնականապէս ընդունած է ազգակա-
նական եօթներորդ աստիճանի թոյլտու-
թիւնը ամուսնութեան համար: Ահալասիկ
հայրապետական կոնզակ մը, տրուած
1899, դեկտ. 17-ին. «Այսուհետեւ անպայ-
ման թոյլատրել Սինդի օրագրերով եօթնե-
րորդ աստիճանի ազգակցական (արեւակցա-
կան) ամուսնութիւնները, որովհետեւ այդպէս
է ժամանակի պահանջը»¹⁷: Այս դրութիւնը
ներկայացնող պարզ աղիւսակի մը օրինա-
կը հետեւալն է.

- Եղբայր (1) Բոյր (2)
- Որդի (3) դուստր (4)
- Թոռ (5) թոռնուհի (6)

(7)

Ինչ կը հայի խնամական «հաս»ի եւ
«չհաս»ի, հայ եկեղեցին կաթողիկոսական
կոնզակով, 1899-ի յունիս 30-ին, թեմա-
կան առաջնորդներուն իրաւունք կու
տայ, առանց դիմելու սինդի, թոյլ տալ
ամուսնանալու խնամիական հինգերորդ
աստիճանին¹⁸:

ԳԼՈՒԽ Գ. ՆՇԱՆՏՈՒՔ

Հայկական հարսանիքի ամենակարե-
ւոր մեկ փուլը, անոր նախագուռը եւ պատ-
րաստութեան սկիզբն է նշանտուքը: Նշան-
տուքը ունի զանազան բաժանումներ.

15 Կիրակոս Գանձակեցի, Պատմ., Թիֆլիս, 1909, էջ 289-90:
16 Գիրք Հարցմանց, Կ. Պ. 1729, էջ 611:
17 «Արարատ», Վաղարշապատ, 1902, էջ 131:
18 Նոյն տեղում, էջ 130:

1. Աղջիկտես, 2. խօսքկապ եւ 3.
նշանօրհնէք:

1. Աղջիկտես. - Հայ ազգային դարաւոր
սովորութեան համաձայն մանչու մը կամ
աղջկան մը ամուսնութեան համար անոնց
ծնողքն է, որ պարտականութիւն կը զգայ
ընտրութիւն ընելու, այսինքն, իր մանչուն
կամ աղջկան յարմար ամուսին մը գտնե-
լու: Զաւակները պարտական էին հպատա-
կիլ այս կէտիս մէջ իրենց ծնողքին: Այս
սովորութիւնը ընդհանուր առումով տա-
կաւին գոյութիւն ունէր մինչեւ քսանե-
րորդ դարու սկիզբները թէ՛ թրքահայերու,
թէ՛ ռուսահայերու եւ թէ՛ պարսկահայերու
մէջ: Հին եւ ընդհանուր սովորոյթը մատ-
նանիչ ընելով, 1877-ին կը գրէ Պոլսոյ
Հայրենիք օրաթերթը. «Եթէ մեր հայեացքը
կէս դար առաջ դարձնենք (1827-ին), պի-
տի տեսնենք որ ծնողքը, առանց իրենց
զաւակաց գիտութեան, հարսը կամ փեսան
կ'ընտրէին. ասի գրեթէ պարտք մըն էր, սր-
բազան պարտք, որով հայր մը կամ մայր
մը իրենց ձեռք զաւակին կ'ամուսնաց-
նէին, որով իրենց ընտանեաց շարունակու-
թեան հիմունքը կը գետեղէին»¹⁹:

Ի՞նչպէս կ'ըլլար ընտրութիւնը: Բուն
ընտրութիւնը մանչուն տունէն կը կատա-
րուէր. աղջկան կողմէ ընտրութիւնը ցան-
ցառաղէպ բան էր: Երբ ծնողք կը տես-
նէին, թէ իրենց մանչը չափահասութեան
տարիքը թեւակոխած է, իրենց փափաքն
էր չմեռած իրենց զաւակին լաւ ամուսին
մը գտնել եւ ատով նաեւ ապահովել իրենց
ընտանիքին ու «օճախ»ին շարունակու-
թիւնն ու շէնութիւնը:

Գլխաւորաբար մօր պաշտօնն էր ուշա-
դիր ընել իր ամուսինը, որ իրենց տղուն
«ժամանակը հասած է», պէտք է զայն
ամուսնացնել: Երբ հայրը հաւանէր, այ ան-
կէ վերջ տղուն մայրը, իր ծանօթ կիներու
ու ազգականներու օգնութեամբ, կը ջանար

19 «Հայրենիք», Կ. Պ., 1877, թ. 394, Խ.Յ. Սուրան:

իր զաւակին լաւ աղջիկ մը գտնել: Աղջիկ-
տեսի այս նուրբ գործը գլուխ հանելու հա-
մար տեղական սովորութիւնները ունէին
նրբերանգութիւններ, պէսպիսութիւններ:

2. Խօսքկապ. - Խօսքկապը երկու կողմին
աներկեւան հաւանութեան կնիքն է: Նպա-
տակն է երկկողմանի համաձայնութիւնը
ամրապնդել որեւէ ձեւով՝ խոստումով,
դրամական նուէրով, մատանիով, եւ այլն:
Խօսքկապի պաշտօնական արարողութիւնը
տուներու մէջ կիներու միջեւ կը կատարուի
սովորաբար: Երբեմն խօսքկապը աղջիկտե-
սի միջոցին կ'ըլլայ: Երբեմն ալ աղջիկտես,
խօսքկապ եւ նշանօրհնէք միասին, մեկ
արարողութեամբ կը կատարուին:

3. Նշանօրհնէք. Խօսքկապով երկու
տուներու միջեւ խնամիական կապը կը սկ-
սի: Այդ կապը մտերմական սերտ միու-
թեամբ կ'ամրապնդուի նշանտուքի վերջին
արարողութեամբ, որ է նշանօրհնէքը:

Նշանօրհնէքը երկու կողմի տաներէց-
ները կը կատարեն շարականով, սաղմոսով
եւ աւետարանով:

ԳԼՈՒԽ Դ. ՀԱՐՍՆՏԵՍ

Երբ նշանածները տակաւին հասուն
տարիքի մէջ չեն եւ կամ որեւէ պատճա-
ռով պսակադրութիւնը կը յետաձգուի
(Բաղէշի մէջ տարի մը, Շապին Գարահի-
սարի մէջ երեք տարի), այդ պարագային
մանչուն տնեցիները կը պարտաւորուին
քանի՛ մը անգամ հարսնտեսի երթալ աղջ-
կան տունը: Այս արարողութիւնը ունի իր
յատուկ սովորոյթը զանազան տեղերու
համեմատ: Ընդհանուր է հարսնտեսի գա-
ցողներուն համար անպայման նուէրներ
տանիլը աղջկան տունը²⁰:

Խարբերդի նշանտուքը «առնուազն
տարի մը կը տեւէ, երբեմն աւելի երկար ...
Այս միջոցին, տաղաւար տօնին, տղուն

20 «Արեւիք», 1908, թիւ 6761. «Հայ կիւն», 1919, թիւ
3136-7:

մայրը խուճը մը կիներով փայ կը տանի
հարսանցուին. փարլախ գոնտուրա, սկի
խաթար, մէջքի քամար, պիլարզուկ, լա-
չաքներ, խուլթի եւ ուրիշ խալաթներ»²¹:

Հարսնտեսի հետ, տեղ տեղ, կայ նաեւ
փեսատեսի սովորութիւն:

ԳԼՈՒԽ Ե. ՀԻՆԱԴՐՕՆՔ

Հինադրօնքը ռուսահայոց քով կը
կոչուի հինադրէք: Զեռքերուն հինայ
դնելու սովորոյթն է, գրեթէ ընդհանրա-
ցած Հայոց քով:

Հին ժամանակները բազմութեամբ կը
մասնակցէին հինադրօնքին, որ մասնաւոր
հանդիսութեամբ տեղի կ'ունենար: Պոլսոյ
Հայոց սովորութիւնը կ'ընդնշարուի 1911-
ի պատրիարքական կոնզակէն, որ կ'արգի-
լէ խմբովին մասնակցութիւնը եւ զարդե-
ղէններու շոյուրութիւնը. «Ի հինային այր
եւ կին եօթն մարդ միայն գնասցեն: Ի
գլուխսն շալ եւ ի ձեռս կիւլապտան մի՛
գտանիցի»²²:

ԳԼՈՒԽ Զ. ՕԺԻՏ

Օժիտը հարսին ծնողքէն իրեն
տրուած զգեստներն ու զարդեղէններն են,
որոնց հետ յաճախ կը տրուին նաեւ նիւ-
թեր, որոնց պէտք ունի նորակազմ ընտա-

21 Մանուկ միզմեճեան, Խարբերդ եւ իր զաւակ-
ները, Ֆրեզո, 1955, էջ 670:
22 1718-ին Եղիսարեթուպոլսոյ Դրամսիլուանիս,
Հունգարիա) Հայոց հարսանեկան բառերուն մէջ
կը գտնուէր «հինադրօնք», որուն հրատարակի-
չը սիւսի մեկնութիւն տուած էր այս բառին, որ-
պէս «խնդրք, ճաշ կամ հանդիսատար նշանտուք»
(«Հանդէս Ամսօրեայ», 1897, էջ 90):
«Բազմավէպ» (1897, էջ 191) կը գրէր, որ այդ
բառը «հինադրօնք» է եւ միայն Համշէնի եւ Պոն-
տոսի գիղացիներուն ա գիրը օ արտասանելուն
պատճառով դարձած է «հինադրօնք»: Սակայն
բոլոր հայերու քով բառը «հինադրօնք» է, օրինա-
կի համար Բաղէշի մէջ («Արեւիք», 1908, թիւ
6764): Ասոր անուն է Մշեցիներու «տաշտա-
դրօնք» («Բազմավէպ», 1867, էջ 308):
23 Կոնրակ, էջ 8:

նիքը, օրինակ՝ անասուն, արտ, տնակ մը կամ համապատասխան դրամական օգնութիւն մը բնակարանի շինութեան համար, եւ այլն:

Օժիտին արժէքը կախում ունի աղջկան ծնողքին նիւթական կարողութենէն: Անշուշտ նաեւ տեղական սովորութենէն:

Սեբաստիայի նորահարսին օժիտը կը բաղկանար 15-20 ձեռք զգեստէ «պատրաստուած մետաքսեայ թանկ պարեգօտներ, չիթ անդրավարտիքներ, վտաւակ, նուրբ շղարչեայ շապիկներ, վերարկուներ, գուլպայ եւ իւրաքանչիւր զգեստի մէջ մետաքսեայ թաշկինակներ: Ծապիկները եւ զգեստները ժանեկազարդուած կ'ըլլան իրենց իսկ ձեռքով պատրաստուած ձեռագիւտներով: Ասոնցմէ զատ կը բերեն զարդեղէններ՝ ճակտի ոսկի շարոցով, օղ, ապարանջան, տասը մատներուն թուով մատանի, զարդասեղներ, եւ այլն»²⁴:

ԳԼՈՒԽ Է. ՀԱԼԱԻՕՐՀՆԷՔ

Հայկական հարսանիքի հանդիսական պահերէն մին է հալաօրհնէքը: Հալալ յատուկ բառն է հարսանեկան զգեստին թէ՛ փեսային եւ թէ՛ մանաւանդ հարսին: Օրհնութիւնը տեղի կ'ունենայ իրենց տուներու մէջ: Փեսային հագուստներն ու գտակը, բացի տաբատէն, ափսէով կը բերուին հիւրասրահ, տաներէցը կ'օրհնէ զանոնք «Որ գտիրականդ կերպարան զգեցուցեր» շարականով եւ կը յանձնէ ծնողաց ու պարագաներուն, որոնք կարգով, մաղթանքի համբոյրներով եւ ուրախութեան արցունքներով, կը զգեստաւորեն «թագաւոր»ը:

Նոյնը՝ հարսնետան մէջ «թագուհի» համար, «Այսօր երկնայինք ուրախացան» կամ «զՔրիստոս թագաւոր» շարականով: Յետոյ աղօթք. «Օրհնեա՛... զհալալս զայս հարսանեաց, զի որք զգեցցին զսա, մի՛ իշխեսցէ մերձենալ ի սոսա չար աղանդ դի-

ւաց կամ կախարդաց, այլ ամրացեալ զօրութեամբ Ս. Խաչի քո՛ փրկեսցին յամենայն որոգայթից սատանայի»²⁵:

Հարսն ու փեսան հագուեցնելն ալ մասնաւոր արարողութեամբ տեղի կ'ունենար եւ յատուկ սովորութեամբ ընդելուզուած էր: Օրինակ. Սեբաստիայի մէջ փեսան հագուեցնելու իրաւունքը կը ստանայ այն, որ աճուրդի հանուելով ամենաբարձր գինը կը վճարէ: Այս դրամը եկեղեցւոյ կը տրուի: Քահանան ամենաշատ դրամ տուողը կը հրահրէ փեսան հագուեցնելու պաշտօնին: Փոքրիկ տղաք գոյնզգոյն վառ մոմեր բռնած կը սկսին «խորհուրդ խորին» երգել, մէջընդմէջ «ճապա՛ւ» (կեցցէ) պուրով: Ափսէի մէջ դրուած փեսային զգեստները մի առ մի կը հագցնէ, նախ բաճկոնը, որ աղջկան կողմէ ղրկուած կ'ըլլայ. յետոյ վերարկուն՝ «վայլե՛ս ու վայլեցնե՛ս» մաղթելով: Գլխարկը հօրը կը յանձնեն տղուն գլուխը դնելու համար: Հայրը համբուրելով զակիւն ճակատը՝ զրպանը դրամներով կը լեցնէ եւ գլխարկը գլուխը կը դնէ, իսկ տղան երախտագիտութեամբ ու արցունքոտ աչքերով կը համբուրէ հօր ձեռքը ու մաղթանքներ կ'ընեն²⁶:

Սեբաստիոյ հարսը հագուեցնելու ատեն, երբ կարգը գօտիին կու գայ, «մանչ մը քեմերը առնելով երեք անգամ կը պտտցնէ հարսին շուրջը, ըսելով. «Հատ մը քեզի պէս, օխտը ինծի պէս»²⁷:

ԳԼՈՒԽ Ը. ՀԱՐՍՆԱՌԻ – ՊՍԱԿ

Հարսանիքի վերջին արարողութիւնն է հարսնառ եւ պսակ: Ասիկա ընդհանրապէս երկուշաբթի օր տեղի կ'ունենայ: Հոս հանդիսութիւնը, կերուխումը, պարը եւ պէսպէս ուրախութիւնը իր գագաթնակէտին կը հասնի: Հարսանիքը հայ գեղջուկ

25 Թէոդիկ, Ամէն. Տարեց. 1929, էջ 112-3:
26 «Հայ Կիճ», Կ. Պ. 1928, էջ 3153:
27 Անդ:

24 «Հայ Կիճ», Թիւ 3168:

ժողովուրդի գրեթէ միակ առիթն ըլլալով համախումբ, ամբողջ գիւղով ցնծալու, զուարճանալու եւ կեանքը վայելելու, պսակի այս վերջին արարողութիւնը ամենափայլուն շեշտը կը դնէր նոր ընտանիքի մը կազմութեան համար: Հոս հայ գեղջուկը ինչ որ ունէր կու տար ի սէր իր գաւկին, իր աղջկան երջանկութեան:

Հայ հարսանիքի այս վերջին հանդիսութեան մէջ հետաքրքիր պարագայ կայ, որ հայ ժողովուրդի բնատուր, դարաւոր եւ ցեղային բարձր բարոյականը երեւան կը բերէ: Թէեւ պսակադրութեամբ հարսանեկան բուն հանդէսը վերջացած կ'ըլլայ եւ հարս ու փեսայ իրաւունք ունին առանձնանալու իրենց յատուկ սենեակը (առագաստ), սակայն հայ ժողովուրդի խիստ բարոյականը պսակադրութեան վերջին արարողութենէն, հարսին ու փեսային իրենց տունը դառնալէն յետոյ ալ, թոյլ չէր տար առագաստ մտնելու, այլ փեսան կնքահօր տունը կը գիշերէր, հարսն ալ իր կնքամօր կամ պահապան կնոջ մը քով: Եւ ասիկա ոչ թէ մեկ, այլ քանի մը գիշեր կը տեւէր:

2. ՀԱՐՍԱՆԻՔԸ ԻԻՐԱՔԱՆՉԻՐՔԱՂԱՔԻ ԵՒ ԳԻՒՂԻ ՄԷՋ

Այժմ տեսնենք Հայկական հարսանիքը իւրաքանչիւր քաղաքի եւ գիւղի մէջ իրենց յատուկ սովորութիւններով: Դժբախտաբար այնքան գրութիւններու մէջ – յօդուած, մենագրութիւն, ուսումնասիրութիւն ու գրքեր – որոնք կը խօսին հայկական հարսանիքի մասին, ոչ ոք հետաքրքրուած կամ պէտքը զգացած է իր գրութեան ընկերացնելու նաեւ պատկեր մը, լուսանկար մը տեղական սովորութենէն: Հազիւ մեկ-երկու եւ այն ալ անշան պատկեր տուած է Ե. Լալայեան իր «Ագագազական Հանդէս»ի մէջ: Յաւանքով այն է, որ այսօր եթէ ուզուի ալ, անհնար է ունենալ մանաւանդ Արեւմտեան Հայաստան

նէն լուսանկար կամ որեւէ պատկեր հարսանիքի մասին: Մինչդեռ մեր փափաքն էր տալ մեր սովորութիւններէն նաեւ տեսանելի նմոյշներ կլիշէ-պատկերներով:

ՄՈՒԾԻ ԵՒ ԾՐՋԱԿԱՅ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՄՈՒԾԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

«Հանդէս հարսանեաց Մուշ գաւառին մէջ» խորագրով յօդուած մը լոյս տեսած է «Բազմավէպ»ի մէջ 1867-ին, որ այստեղ յառաջ կը բերենք լեզուական որոշ սրբագրութիւններով:

Մշոյ երկիրը սովորաբար մանչերը քսան տարեկանին կ'ամուսնանան, իսկ աղջիկները՝ տասներկուքէն տասնչորսէ: Աղջիկը տասներկուքէն անդին այլեւս լօռ կը կոչուի: Իսկ նշանուիլը աւելի փոքր հասակի մէջ կ'ըլլայ երբեմն, բայց հարսանիքին համար կը սպասեն:

Նշանուելու եւ հարսանիքի առաջին արարողութիւնն է «Ուզընկան», ուզել բառէն: Փեսային հայրը իր բարեկամները հրահրելով աղջկան հօր տունը կ'երթան. աղջկան հայրն ալ արդէն տեղեակ ըլլալով իր ազգականները տունը հաւաքած կ'ըլլայ: Վերջապէս խօսքը կը դարձնեն իրենց զալուն պատճառը յայտնելու: Աղջկան հայրը այնչափ «ծանրէն կը քաշէ», որ գոնէ երեք գիշեր այս արարողութիւնը կը կրկնուի: Վերջին գիշերը աղջկան հայրը կ'ըսէ «Աղջիկս մօրն եմ տուած. մայրն ալ որդւոյն կամ բարեկամներէն մեկուն կու տայ. վերջինն ալ փեսային անունը տալով կ'ըսէ. «Ես ալ Գրիգորին տուի, գնաց»: Այն ատեն փեսային հայրը նոր խնամիին ձեռքը կը համբուրէ: Եւ ահա «լրտեսներ», որ դուրսը կը սպասէին, ներս կը վազեն ըսելով «եղաւ, եղաւ, իմ «անկրճկըլէն» (աւետիք տալու վարձքը) տուր»: Ասոնց գոհացում տալէն վերջ, նոր հարսը «քողւորած» դուրս կը հանեն, որ իր նոր կեսրէրին (կեսրայր) ու անոր ազգականներուն

աջը կը համբուրէ, անոնք ալ հարսին պարգեւ տալէ վերջ, կը յանձնեն նաեւ բաւական «գնօջ» (սուղ) մատանի մը եւ դրամ: Այդ է «խօսքկապը»:

Անկէ վերջ քահանան կու գայ նշանը կ'օրհնէ, այսինքն, հարսին նոր շինուած զգեստները, զարդերը: Նոյն գիշեր փեսային հայրը հրաւիրուածներուն ճաշկերոյթ կու տայ, կ'ուրախանան, նոր հարսը կը շնորհաւորեն եւ Ուզընկանը կը վերջանայ:

Նշանելէն վերջը որոշուած հարսանիքը տեղի կ'ունենայ երբեմն շաբաթ մը, ամիս մը, ամիսներ, տարիներ վերջը:

Փեսայի տունն ալ հարսի տունն ալ հարսանիքը միաժամանակ կը սկսի: Հարսի տան հարսանիքը «Ծաղկոց» կ'ըսուի, իսկ փեսայի տանը՝ «Տաշտադրօնք»: Ծաղկոցը տաշտադրօնքի համեմատութեամբ շատ համառօտ է. հոն հրաւիրեալները բոլորն ալ, բացի հարսին ազգականներէն, աղջիկներ ու կիներ են: Փեսային հայրը նախապէս մորթելու համար եզ մը կամ ոչխարներ, գինի ու ծաղկոցին համար հարկաւոր ուտելիքը հարսին տունը կը ղրկէ, որ քըրտերէն «Պահրապու» կը կոչեն: Բերող ծառային հարսի հօր տունէն ձեռածիր կը տրուի:

Ծաղկոցը քիչ մը տխուր է, որովհետեւ տնեցիները կու լան երբեմն երբեմն: Երեք ժամի չափ խաղալէ, խնդալէ վերջ սեղան կը սարքեն: Յետոյ հարսը հագուեցուցած կը բերեն. մեկը կը սկսի մագերէ հիւսել, միւսները երկու խումբ բաժնուած՝ ողբաձայն եղանակով «Շեմկիկ, մի՛ ժաժա»²⁸ կ'երգեն. հարսին սիրտն ելլելով կը

սկսի լալ, որով ազգականներն ալ կու լան: Բոլոր հրաւիրուածներուն ձեռքերը հինայ կը դնեն ու ծաղկոցին նոյն գիշերուան հանգէսը վերջ կը գտնէ:

Տաշտադրօնք: Ամբողջ գիւղը կը հրաւիրուի փեսային մօտ. եթէ ուրիշ գիւղերը ազգականներ ու բարեկամներ կան, անոնք ալ: Հրաւիրեալները երկու դասի կը բաժնուին՝ կիներ եւ այրեր: Այս արարողութիւնը «Կոչընկան» կ'ըսուի, այսինքն, կանչուածներ: Կիներէն կոչընկան գացողներէն մեկը պիտի ըլլայ փեսային քոյրը, ուրիշ մեկ կամ երկուքը՝ ազգականներէն: Այս կիները հարսանեկան զգեստներով զարդարուած, հետերնին ալ տղոց խումբ մը, գիւղին տունները կ'երթան ու կը ստիպեն, որ գոնէ մեկքանին հրամանն գան: Տղոց խումբը տուններէն տրուած չոր պտուղներով, ողջ հաւերով եւ տեսակ տեսակ անուշեղէններով բեռնաւորուած՝ տուն կը վերադառնայ: Այս կոչընկանէն մեկը նոյն ինքն նոր փեսան է, որ նոր-փեսայ կամ «թագուր» կ'ըսուի: Անոր կ'ընկերանայ ուրիշ երիտասարդ մը որպէս «ազապ-պաշի», կամ խաչեղբայր, որ հարսանիքի օրերը «թագուր»ին քովէն ամենեւին պիտի չբաժնուի. գինիի փարջն ու կթղան (գաւաթ) միշտ ձեռքն է եւ ստէպ ստէպ

- Ես եմ թնտալու,
- Օուշան տանելու:
- Հողիկ մի՛ սըռա եւն:
- Ծառուկ մի՛ դողա եւն:
- Տերիկ մի՛ թափի եւն:
- Արեւ դում մ'ելմի եւն:
- Արեւ մի՛ պատի եւն:
- Լուսին դում մ'ելմա եւն:
- Լուսին մի՛ պատի եւն:
- Օողունք մի՛ ցոլաք եւն:
- Կոռուկ մի՛ կըզա եւն:
- Մէրիկ դում մի՛ լա եւն:
- Հէրիկ դում մի՛ լա եւն:
- Աղբեր դում մի՛ լա եւն:

28 Յօդուածագիրը այս երգի բնագիրը չէ տուած: Կ'առնենք Յ. Մ. Սիրունիի յօդուածէն («Սուրհանդակ», Կ. Պոլիս, 1906, թիւ 2351):

Օեմկիկ մի՛ ժաժա,
Ես եմ ժաժալու,
Օուշան տանելու:
Տախթիկ մի՛ թնտա,

առջեւը ելլողներուն ու քովի երիտասարդներուն կը հրամայէ:

Այս երկուքը հագուած զարդարուած, գլուխին գոյնզգոյն ոսկի թիթեղներէ շինուած վարդեր դրած՝ տունները կոչընկան կը պտտին եւ տան տէրերը ասոնց մասնաւոր պատրաստուած բանուած գուլպաներ, մէջք կապելու շալեր, ասեղնագործ գտակներ եւն. կու տան. իսկ թագաւորին ազգականները՝ կով մը, ձի մը կամ ոչխարներ:

Տունը հարսանիքի-հիւրերով կը լեցուի, «ազալները» թագաւորին շուրջը կը խրոնուին, կիներն ու աղջիկները այրերէն զատ նստած են. անդին երիտասարդներու բազմութիւն մը կիսաբոլոր պար ձեւացուցած եւ 70-80 հոգինոց շրջանակ մը դարձած է: Պարը երբեմն երկու կամ չորս երիտասարդներու երգելու եղանակին կը յարմարի, երբեմն ալ թըմբուկի եւ ջուլթակի զարնուածքին: Մեկը «Վայ որ Տէրտերը կուհէ», ուրիշ մը՝ «Թող կուհէ, բան չեղնի. թռէք» ըսելով առաջ կը տանին պարը: Տէրտերներն ալ երբեմն նոյն բոլորակին մաս կը կազմեն:

Այս միջոցին «Հարսնեց» տանտիկիներ եփած կերակուրի մեծ մեծ պտուղներու շուրջ կը դառնան, մեկը համը կը նայի, միւսը սոխուածները կը շինէ, ուրիշ մը մշակներու հետ մառան կ'երթայ լօշերով լեցուած սակառիկները տունը փոխադրելու, ոմանք ալ մեկ մեկ կուժ ու ձագար ձեռքերին՝ դէպի գինիի կարասները կը շտապեն:

Սեղանը կը շտկուի, կերակուրներով լեցուն մեծ մեծ սկաւառակները կը շարուին. ճերմակ ու մեկ մեղր երկայնութեամբ լօշերը վրայէ վրայ սեղանին եզերքները կը դիզուին. աղանդերի սահնիկներուն (պնակ) մէջ չամիչ, կթոն, փշատ, բղինջ ու նման չոր պտուղներ կը լեցուին: Պարը դադրած է. ոտքի վրայ միայն կերակուր բաժնողներն են ու մատուակները, որոնք ձեռքերին մէյմեկ

փարջ ու կթղայ (կաւէ գաւաթ) առած՝ բռնի գինի կը խմցնեն. ասոնք ընդհանրապէս թագաւորի ազգականներ ու մտերիմներն են: Մեկը «Ուրախացէք, օր Գրիգոր (փեսային անունը) պիտի կարգենք». մեկը «Կենդանութեն». միւսը «Անուշ, անմահութեն», կը խմեն: Թագաւորին ուղղուած մաղթանքներով տունը կը թնդայ:

Այնուհետեւ վարդապսակ թագը թագաւորի գլուխը կը դրուի եւ «ազալներն» կը սկսին փոփոխական եղանակներով «Թագուր բարով հազար խէրով» երգելով՝ գովել թագաւորը, որ ժամ մը կը տեւէ: Վերջապէս ոտքի կ'ելլէ փեսան. կարմիր ու բանուած չուխայ պղնձաւորը ուսերուն կը ձգուի, ճերմակ լաչակի մը մէջ դրուած կարմիր խնձոր մը ձեռքը - որ ձեռքը կը մնայ մինչեւ պսակին վերջը կամաց կամաց քալելով տունէն դուրս գալով՝ կարճ պտոյտ մը կ'ընէ ու կը վերադառնայ. բոլոր հանդիսականները ետեւէն ու առջեւէն մոմերով ու լապտերներով իրեն կ'ընկերանան. կիներէն մօտիկ ազգականները գոյնզգոյն թաշկինակներ ձեռքերին շարժելով՝ «թեւխաղ» կը քաշեն (կը խաղան, կը պարեն). երիտասարդներէն ալ ոմանք կ'երգեն, ոմանք կը պարեն, ոմանք խաղ կը կանչեն, ոմանք ալ «ապրիս» կը պոռան... բարեմաղթութիւններու աղաղակներով օդը կը խլացնեն... կթղաներու տուրեւառ շատ կ'ըլլայ. գինետունը մեծ առատածեղնութիւն ցոյց կու տայ... Տուն կը վերադառնան, մեծ պարը կը բոլորի ... կը յոգնին... «խապըրբերներ»ը «լուսոյ աստղը ելաւ» կը կանչեն, մինչ քաւորկիներ արդէն հարսնեց-հիւրերու ձեռքերը հինայ կը դնէ:

Երբ «Հարսնած»ը կը սկսի, հեռուէն հիւրընկալներու բազմութիւն մը ճամբուն գլուխը կը սպասէ եւ հոն հասածին պէս՝ ալ հրաւէր հրաւէրի վրայ կու գայ, գրեթէ ամբողջ գիւղը հարսանիքի տուն կը դառ-

նայ. տեղ առատ հացկերոյթ, սերտ սրտերու ուրախութիւն. . .

«Ապիտակ-մօրուքներու» (գիւղի ծերերը) հետ հարսնածի կ'երթան նաեւ թագաւորի մերձաւոր ազգականներէն երկու մանկամարդ կիներ, որոնք «պըրպուք» (քիւրտենէն՝ հարսն առաջնորդող) կ'ըսուին: Հացկերոյթի միջոցին պըրպուքներն ու հարսի հասակակից աղջիկները հարսը կը հագուեցնեն: Հարսին մայրն ու քոյրերը մեկդի կեցած՝ աչքերնին կը սրբեն. հարսն ալ կու լայ: Հարսի դեղին մուճակներուն մէջ կորեկի հատիկներ կը լեցնեն, որպէս զի պտղաբեր ըլլայ... Հարսին հագուելէն վերջ գոյնզգոյն քողերով կը սքողուի եւ կը սկսի հարսնածը տնէն դուրս ելլել մեծ դղրդամաք, որովհետեւ ոմանք հարսի հօր տունէն մեկմեկ պտուկի խուփ, սկաւառակ կամ ափսէ գողցած են, զոր վահանի տեղ պիտի գործածեն՝պսակէն վերջ հարսին դիմացէն սրախաղութեամբ գացած միջոցին... Հարսը ձիու վրայ կը նստեցնեն, որչափ ալ տունը եկեղեցւոյ մօտիկ ըլլայ. հարսնաղբերը ձիուն սանձը բռնած՝ կամաց կամաց դէպի ժամ կ'երթան Հանդիսականներու բազմութեամբ:

Մինչ հոն այս գործողութիւնները կ'ըլլան, անդին թագաւորն իր բոլոր թագաւորական զարդերով զարդարուած եւ «ազարներու» խումբ մը մեծ գաւազաններով զինուած իբրեւ թիկնապահ՝ կամաց կամաց ժամին կը մօտենայ: Խաչաղբարն մերթ ընդմերթ ազգաներուն ու դիմացը ելլողներուն գինի կը բաժնէ, իսկ երբ թագաւորին կը հրամայէ, թագաւորը պէտք է որ կլթան (գավաթը) դատարկելու համար երեք անգամ բերանը տանի եւ անգամ բոլոր ներկաները միաբերան «Անոյշ, անոյշ» պոռան:

Վերջապէս հարսն ու փեսան ժամին դուռը կը հասնին: Պահ մը լուսթիւն կը տիրէ, որովհետեւ քահանան կու գայ: Ան ներս կը մտնէ, վերջը հարսը, վերջը փեսան. կը խոստովանին, եւ պսակը կը սկսի: Քահ

հանան հարցումներ կ'ընէ, նախ փեսային կը դառնայ. «Կաղանայ, կուրանայ, տէ՞ր ես», կ'ըսէ: Փեսան՝ «Հրաման ես»: Նոյն հարցումը՝ հարսին ալ, որ եթէ շատ ամչկոտ է, պըրպուքներէն մեկը ետեւէն գլուխը դէպի յառաջ կը մշտէ, որ «Այո՛» ըսել է:

Պսակը կը լմննայ. հարսն ու փեսայ դուրս պիտի հանեն, ճամբայ չկայ. ժամկոչը դրան կպած է, որ աքցանով քաշես, չի փրթիր, բայց հինգ դահեկանով կը փրթի: Թագաւորն իր ամբողջեամբը դուրս կ'ելլէ, ետեւէն հարսը: Հարսի ձին հոն կեցած է, բայց շատ դժուար է վրան դնել, որովհետեւ ձին բռնող պատանին սանձը չի թողուր, մինչեւ որ զինքն ալ գոհ ընեն: Հարսը ձիուն վրայ կը դրուի, հարսնաղբերը սանձը բռնած, պըրպուքներն երկու քովէն, թագաւորն իր թիկնապահ գունդով ձիու առջեւէն, ծանր քալուածքով մը կը սկսին դէպի «թագաւորինաց» տունը երթալ:

Թագաւորի խումբին դիմացէն իր ազգական կիներ թեւխաղ²⁹ քաշելով կ'երթան, ստէպ ստէպ փայփայելով ու սէր ցուցնելով. ասոնցմէ առաջ նուագարաններն ու երգիչներն են. ասոնցմէ առջեւին՝ տիրացուններու խումբ մը, որ ծնծղաներ զարնելով «Առաւօտ լուսոյ» կ'երգեն, որոնց վերջը մէյմեկ զոյգ խատուտիկ գուլպայ ընծայ կը տրուի: Ասոնցմէ առաջ անցած են «մութըլեցուկ» (սրախաղութիւն) խաղացողները, որոնց վահանն է պտուկի խուփ ու սուրերնին ալ շատ անգամ ծխամորճերու կոթեր, ոմանք բուն թուր ու վահան ալ ունին, ոմանք ալ երբեմն հրացան ու ատրճանակ կը պարպեն: Ասոնցմէ հետեւորներն են ձիաւորները, որ կը վազվզեն: Այս միջոցին ով որ կով մը կամ նման

29 Մուշի «թեխաղ» պարը Աշտնապատ եղած պիտի ըլլայ: Զայն կը յիշէ Յովհաննէս վարդապետ 1852-ին «Մշոյ Բազկապար» կոչելով: Կը շեշտէ նաեւ, որ այդ պարը չէ տեսած Խարթերոյի մէջ, մինչ ան Մուշի եւ Քղիի մէջ շատ սովորական էր:

կենդանի մը ասոնց դիմացն հանէ, ստակ կու տան անոր:

Վերջապէս Թագաւորնց բակը կը հասնին. հարսը ձիով կանգ կ'առնէ. հարսին սկեսուրը, որ քիչ շատ պառաւ կ'ըլլայ, նախ որդւոյն երեսը համբուրելու կ'երթայ, ապա հարսին դիմացը կու գայ եւ օրօրուելով պարելու կը հրաւիրէ, իսկ եթէ սկեսուրայրն ալ հոն գտնուի, իրարու ձեռքէն բռնած՝ պզտիկ հարսանիք մըն ալ անոնք կը ձեւացնեն: Վերէն հարսին գլխուն ու բազմութեան վրայ միակերպ չամիչ ու նման պտուղներ կը սփռուին եւ ահա սկեսուրը հարսի առջեւէն՝ տուն կը մտնեն, նոյնպէս բազմութիւնը, որչափ որ տունը կը տանի:

Այս միջոցին «թագաւորակովընտ» կոչուած պարը պիտի խաղացուի, որ հարսանիքի պարերէն էն գլխաւորն է, թագաւորի պար³⁰ ալ ըսուած, որուն մէջ կը մտնեն նաեւ հարսն ու փեսան եւ անոնց հետ ալ խաչաղբարն ու հարսնաղբերն:

Պարը կը լմննայ, քահանան կու գայ պսակը կ'օրհնէ, խրատ կը խօսի ու կ'երթայ: Իրիկունը հարսնեց-հիւրեր տունը կը հաւաքուին եւ հարսանիքը կը շարունակուի. կու գայ խրծիքը, որ է կողով մը լեցուն խորսով (խորխիսով) գաղա, խորոված գառներ, հաւեր, քաղցրաւենիք ու պտուղներ, զոր հարսին մայրը նորփեսային կը դրկէ եւ հարսին ազգականներէն երկու կիներ կը տանին շալկողներու առջեւէն երթալով: Խրծիքը հիւրերուն կը բաժնուի. մաս մըն ալ թիկնապահներուն կը մնայ:

Հանդէսները լմնցան: Հարսանիքի վերջին գիշերն է. տղաքն ալ երբեմն երբեմն կը կանչեն. «Ամեկ (մեկը) իր տուն, լակլակ իւր բոյն, խաչաւետրան մըր թագաւորի գլխուն»: Ամենքը կը քաշուին: Կը մնան մերձաւոր ազգականները, խաչաղբարն ու հարսնաղբերը:

Յաջորդ օրը պսակճաշ կը տրուի հերիսայով, պարարտ սեղան՝ գիւղի սպիտակամորուսներուն եւ տէրտէրին: Սեղանէն ետքը հարսը կը բերեն, բոլոր հիւրերու աջը համբուրելու, որոնք զատ զատ իրեն ընծայ կու տան: Նորփեսային հայրը հիւրերուն ընծայ կու տայ՝ 20-60 դահեկանի նուէրներ, միայն կնքաքաչօրը աւելի մեծ, որովհետեւ ան ալ հարսին ու փեսային մեծ ընծաներ կու տայ: ամենէն վերջը խաչեղբօրն ու հարսնաղբօրն ալ ընծաներ տալով հարսանիքը կը վերջանայ³¹:

Ծանօթ.- «Թագաւորակովընտ» մեծ պարի բառերը չէ տուած հեղինակը:

Մշեցի Ռաֆֆի «Հայրենիք»ի մէջ հրատարակած է մշեցիներու երգերէն «Հարս ու փեսայի գովանք» վերնագրով երգի բնագիրը, որ այստեղ յառաջ կը բերենք:

Հարս ու փեսայի գովանք
Թագաւորն հագած սրմա ապա,
Խանջար, խաման մէջը կապած,
Արախնինն էր ապրումով,
Կը փկփկէր հայ դրօշով:
Էկի խորթեր գովումս բունին,
Զթագաւորն ու թագունին գովին:

Փռչին էկած էր Բաղդադու,
Մէջը կապած շալ Անումու,
Զթով, պխով (գեղեցիկ հիւսուած)
նշխուն բներ (գուպայ)
Մումայով էր կարմիր սօլեր (կօշիկ):
Էկի խորթեր . . .

Թագունին ֆոլով շատ խորտակի,
Աչից կաթաց մարգրիտ յուշիկ,
Մշոյ սարեր ճամբայ բացին,
Օրհնէ գլխոց տեղացուցին:
Էկի խորթեր . . .

Էղնի կանաչ կակաչ առեւ,
Թող շատնայ ձր պտուղ, տերեւ,

31 «Բազմալէպ», 1867, էջ 307-1:

Սեր միութին միշտ ձրբ տանն
Անպակաս էրնի ձրբ բռնեն:
Եկե՛ք խորթեր...³²

ՄՈՒԾԻ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՏՈՄ ԳԻՒՂ.- Տոմի բարբառով:

1938-ին Պլովդիւրի (Բուլղարիա) մէջ
բնակող Տիկ. Դաւթեանէ (բնիկ Տոմցի) քա-
ղած եմ հետեւեալ Մշոյ Տոմ Գիւղի հար-
սանիքի սովորութիւնը: Տիկ. Դաւթեան
1938-ին 42 տարիէ ի վեր հայրենիքէն
ելած գաղթական մըն էր 70-75 տարեկան:
Տիկինը կը պատմէ.

«Գիւղի միէջ Թիեզ կի կարգուին. աղ-
ջիկը 13-15, մանչ լէ 13-15 տարեկան:
Միէկ օր կի գան կը թոփնին իրիկուն մը
կնքահօր տունը; նշանկի դնեն: Պսակին
շատ չին սպասի: Աղջկան խստմաներ տղի
տուն կի թոփնին, հինայ կի դնին: Էռչէն
հարսի ձեռք կի դնին: Ինչխտիր մարդ կայ՝
կի դնին: Իրիկ մարդուն միէկ ձեռքը կի
դնին հինայ: Աղջկան տունը կի պարին:
Մանչու տուն լէ»:

Լուսուն կ'ելլան կի քակին ձեռուրնիր,
կի վլանան: Օչխար կի մորթին, աղուոր կի
կարմրցուն. էնի կի տանին աղջկան տուն:
Տուեերկու կատայ կի շինին, կի տանին
էրթուկն աղջկան տուն: Իրիկ մարդ կ'իեր-
թայ աղջկան տուն. կնկտի չ'երթայ: Հոն
կ'ուտին, կ'երգին, կի պարին:

Հարսնիքին հերիսայ կի դնին, օչխար
կի մորթին, տոլմայ կի դնին: Կ'ուտին,
բայց չին խմիր րախի կամ գինի:

Հարսին հալաւը. - էրկէն պոյով ջուվայ,
անթարի փեշերով, էրկէն շապիկ-վարտիկ.
գլխին վերէն արծթէ թիեափիեա՝ հտեէն
փուսկով: Ծակտին լէ օսկի շար, անկծին լէ
օսկի օղեր, վիզ լէ կերտէալէախ. ձեռուր-
նին ապրճան:

Մատնիք իերկու իրեք մատները: Զի-
լիւ քունքերէն կախուկ:

Հարսին իրես գուոց է կարմիր փու-
շիով: Գուրպնին նշխուն, սուր սիրուն:
Քողքը ճերմակ ետիդին, կարմիր էռջիդին:

Փեսային հալաւը. - ձերմակ շապիկ-
վարտիկ էրկէն պոյով, ապա փռչով, սիւե
գոյնով, թիւերը կարճ. շիւվար լէ բուրդէ
կ'եղնի:

Օր պատրաստ ին հարս ու փեսայ՝
կ'երթան ժամ երգով, պարով, ուրախութե-
նով: Ժամ կի պսակուին եւ կի բերին, կի
գան փէսի տուն: Ծամբէն իրիկմարդիկ
կ'երգին, կի պարին, կի գան տուն: Փէսի
տուն օր կի գան՝ էռջէն խորզում կի մոր-
թին շէմքին վրէն. կի մորթին, սորայ հար-
սը կի մտնի նիերս, ժողովուրդ լէ կ'երթայ
նիերս: նիերս էկան՝ կի կոխին շօշ, կի կոտ-
րին աման. կի հանին լօշ թոնրէն՝ կի դնին
հարսի գլխին, փեսին լէ:

Հարս օր կի բերին տուն փեսի՝ սեղան
կի շիտկին, հաց կ'ուտին, կ'երգին ու կի
խաղան (կի պարին): Երկու օր, իրեք օր
հասնիք կ'ենին: Մարդ կայ շաբաթըմ
հարսնիք կ'ենի: Փեսի տուն կի գան՝ հաց
կ'ուտին, ուրախութիւն կ'ենին: Աղջկան
իրեսը էրկու օր գուոց կի մնայ. մարդու
հիետ չխորաթէ: Հարսին քողք կիսուր պը-
տը հանի»³³:

ՍԱՍՈՒՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ:

Վարդան Ա. Պետոյեան, բնիկ Սա-
սունցի, Գելիեգուզան Գիւղէն, ունի ըն-
դարձակ ուսումնասիրութիւն մը «Սասնայ
Ազգագրութեան» մասին, ուր կայ «Ա-
մուսնութիւն եւ Հարսանիք» առանձին
գլուխ մը, 36 էջ, որմէ կը քաղենք հետե-
ւեալ գրութիւնը:

Մինչեւ 1900 ամուսնութիւնը կա-
տարուում էր միայն տղայի եւ աղջկան

ծնողներին: Շատ անգամ տղայ եւ աղջիկ
մինչեւ ամուսնութիւն իրար տեսած չէին
լինում:

Խօսքկապ. - Խօսքկապ կոչուում էր այն
զրոյցը, որ տեղի էր ունենում իրար հետ
խնամի դառնալու ցանկութիւն ունեցող-
ների միջեւ: Խօսքկապ ամրացում էր մի
փոքրիկ դրամական նուէրով: Խօսքկապի
գնալը շատ գաղտնի էր լինում:

Նշանդէք. Նշանդէքը ամենահիմնա-
կան, վճռական բաժինն էր կազմում
ամուսնական ծէսերում, որին բացի տղայի
եւ աղջկան ծնողներից մասնակից էին
դարձուում գիւղի ոչսը, քահանան եւ սա-
կաւ թուով շատ մօտիկ բարեկամներ:
Նրանք տղայի տնից, որպէս «նշանուոր-
ներ» իրենց հետ վերցնում էին մի ոչխար,
մի լիւր իւղ, մեկ երկու կոտ պլղուր, գնում
էին աղջկան հօր տուն, գիշեր ժամանակ:
Ոչխարը եւ մթերները առաջ տանում էր
«աղուէս»ը, մի մարդ, որ շատ խորամանկ
եւ ճարպիկ պիտի լինէր:

Ապա գալիս էին նշան դնողները, սօ-
նական շորեր հագած: Աղջկան ծնողները,
ընտանիքի անդամները, բոլորն էլ դիմաւոր-
ում էին եկողներին. օջախի քունջից սկ-
սած նստում էին ըստ աստիճանի: Տղայի
կողմից հասակաւոր մարդկանցից մեկը
զրոյց բաց անելով՝ խօսքն ուղղում էր աղջ-
կան հօրը եւ ասում, որ իրենք եկել են մի
լաչակ խնդրելու եւ սպասում նրա պատաս-
խանին: Աղջկան հայրը պատասխանում էր.
«Բարով հազար բարի էք եկել. Աստուած
թող մեզ չամանչացնի, թող լինի»:

Այդ խօսքերից յետոյ Հարսնացուի
համար բերած նուէրները մի սեղանի վրայ
դրած բերում էին. - ոսկէ գինդ, մատանի,
մանեակ կամ դրանցից մեկն ու մեկը: Քա-
հանան նուէրներն օրհնում էր եւ շնորհա-
ւորում նշանդէքը: Հանդիսականները գո-
չում էին «Աստուած շնորհաւոր անի».
ապա տղայի կողմից եկող մի կնոջ ձեռքով
Հարսնացուի օղերը կախում էին ականջնե-

րից, վզնոցը վզից եւ մատանին ձախ ձեռ-
քի մատնեմատին:

Սկսում էր նշանդէքի հանդէսը. «ա-
ղուէս»ի բերած ոչխարը մորթում, մի մասը
շտապ խորոված էին անում, ուտում, շնոր-
հաւորական թասերով գինի խմում:
Նշանդէքը տեւում էր մինչեւ առաւօտ:

Խղաթ. - Նշանդէքից մինչ հարսանի-
քի որոշուած օր հարսնացուի հարսանեկան
հագուստը տանելու եւ աղջկան տանը
պատրաստելու աշխատանք էր կատար-
ւում: Այդ հագուստների ամբողջութիւնը
նլղաթ էր կոչուում:

Հարսնացուի հագուստը թանկարժէք
կտորից էր լինում, մետաքս ու խոտանի:
Տղայի կողմից էին տարուում հարսի քողը,
կարմիր սուրբ կամ կօշիկները:

Հարսնաձ. Հարսանիքները Սասունում
լինում էին ընդհանրապէս աշնան ամիս-
ներին եւ աւարտուում բարեկենդանի վեր-
ջին: Մեծ-Պատից մինչեւ յաջորդ աշունը
հարսանիք չէր լինում: Հարսնածը շաբա-
թուայ մի օրում կարող էր նշանակուել,
բացի չորեքշաբթի օրուանից, որ չար օր էր
համարուում:

Որոշուած օրուանից մի օր առաջ
գնում էր «աղուէս»ը եւ յայտնում նշուած
օրը: Հարսնածի գնացողները կոչուում էին
«խոնդի», որոնք ընտրուում էին գիւղի մե-
ծամեծներից: Խոնդիների թիւը հասնում էր
40-50 հոգու:

Հարսնածի դէպի աղջկան տուն մեկ-
նումից յետոյ, երբ գիւղացիները հաւաք-
ւում էին փեսայի տանը, մի խումբ երիտա-
սարդներ՝ «թագաւոր»ի մտերիմ ընկերները
այդ իրիկուանից մինչ առազատի գիշերը
մշտապէս մնում էին նրա մօտ: Դրանք
կոչուում էին Ազաբչարիներ: Թագաւորին
այդ Ազաբչարիներն էին լողացնում եւ
փեսայական շորերը հագցնում մեծ հան-
դիսութեամբ: Հագուստը ունէր իր յատուկ
երգը. Ազաբչարին իւրաքանչիւր հագուս-
տին յատուկ երգը(4) երգելով հագցնում

32 «Հայրենիք», Բուստոն, 1932, Ապրիլ 6:

33 Հ. Մ. Պոտուրեան, Գաղութանայ Տարեգիրք,
Պոպրէշ, 1939, էջ 12-13:

էր փեսային... Հարսի շորերը հագցնելիս երգում էին հայերէն երգեր, որոնցից բերում ենք նմուշներ.

- Ջհերիկ խաբեցին գուցէ մի գինով,
- Ջմերիկ խաբեցին թոփիկ մի շիով,
- Ջաղբեր խաբեցին ջուղտակ ջղմով,
- Ջոնուրիկ խաբեցին մատիկ մը հինով:

Ուրքը. - Վերցնում էին գաւազանի հաստութեամբ եւ մօտ երկու մետր երկարութեամբ կլորակ մի ձող եւ դրա վերելի ծայրից սկսած, իրարից 25-30 սմ. հեռաւորութեան վրայ երեք տեղով ձողիկներ էին ամրացնում եւ նրա հետ ուղղանկիւն կազմում: Ստացւում էր ուռքի կմախքը՝ մի կենտրոնական ձողից եւ երեք կողերի տասներկու թելիկներից բաղկացած: Դրանց հորիզոնական ու ուղղաձիգ ծայրերն իրար միանում էին բարակ փայտէ ձողիկներով: Այդ ամբողջ մակերեսի վրայ կախում էին թելերի վրայ շարուած տեսակ թարմ ու չորացած պտուղներ՝ չամիչ, չիր, փշատ, բուլթ (ընկոյզի միջուկ) եւ այլն: Երեք տեղերի խաչաձեւ ձողերի տասներկու ծայրերին կարմիր խնձոր, կարմիր եւ կանաչ ներկած ձու էին ամրացնում: Ուռքի վերելի մասում ամրացնում էին նախշուն եւ փոքրիկ գաթաներ: Ստացւում էր մի «կենաց ծառ», որը ծանրաբեռնուած էր տեսակ տեսակ բերք-բարիքներով: Ուռքը խմելու (զարդարելու) ժամանակ երգում էին գանազան երգեր: Ուռքը կամ կենաց ծառը պտղաբերութեան խորհրդանիշ էր հանդիսանում ամուսնացող հարսի եւ փեսայի համար:

Հարսը տանողները սովորաբար լինում էին 30-40 տղամարդ, ոմանք ձիաւորներ, մեծ մասը ոտանաւորներ, իսկ հարսը յատուկ զարդարուած ձիու վրայ նստած, քողը երեսին, հարսնքոյրերի եւ հարսնեղբոր ուղեկցութեամբ գնում էր «հարսնած»ի հետեւից:... Թագաւորի դօրքն ու Ազաբէրիները երգով ու պարով փեսայի տան դռան առջ դիմաւորում էին հարսին ու

նրա խմբին: Այդ միջոցին հարսի գլխին անձրեւի պէս տեղում էին արծաթեայ եւ պղնձեայ դրամներ, չիր ու չամիչ...

Հարսանիքը տեւում էր 3-7 օր: Վերջին օրը կատարւում էր պսակի արարողութիւնը եկեղեցում կամ փեսայի տանը: Եկեղեցում կատարուելու դէպքում փեսայի տնից բոլոր հանդիսականները մեկնում էին դէպի եկեղեցի... «Եկեղեցում քահանան նախ խոստովանցնում էր պսակողներին եւ քաւորին, յետոյ կատարում էր պսակի արարողութիւնը, որի ընթացքում քաւորը բռնում էր խաչը եւ մերկ սուրը հարս ու փեսայի գլխին. քահանան մետաքսի կարմիր ու սպիտակ երկու բարակ թելերով կազմում էր «նարօտը». քահանան մի բաժակ գինի օրհնելով տալիս էր պսակողներին, որոնք խմում էին. պսակը վերջանում էր «ուռքը կոտրելով» - այն բաժանում էին չորս մասի՝ եկեղեցուն, աւագներին, Ազաբէրիներին եւ աղջիկներին:

Հարսնեւորները ցրուելուց յետոյ թագաւորն Ազաբէրիներին եւ մօտիկ բարեկամներին հրակէրին պատասխանելով գնում էր նրանց տները: Նա հարսի մօտ չէր գալիս, մինչեւ հարսանիքի 7-րդ օրը...

Սասունի պարերից յիշենք այստեղ. «թելխաղ», «ծանր պար», «գորանի», «Չգուտիկը» (ճկոյթ), «իւրիք դազը» (երեք ոտք), «Չարջոլուն», «քոչարին», «թիթըլ խաղ», «թուր ու մառտալ» կամ «մառալուգ» (թրով գդակ թուցնել), «թռնոկին»:
«Պարում էին սրնգի, դհոլ-գուռնայի նուագի տակ եւ երգելով: Այդ երգերն իրենց պար ու եղանակներով շարունակուում են այժմ էլ³⁴:

ՊՈՒԼԱՆԸՔԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Պուլանքը հին Տուրուբերան նահանգի Հարք գաւառն է: Այդ պատճառով

34 Վարդան Պետրոսեան, Սասնայ Ազգագրութիւնը. Երեւան 1965, էջ 232-268:

Մուշի եւ Պուլանքի հարսանեկան սովորութիւնները յար եւ նման են: Պուլանքի հարսանիքը նկարագրուած է երկայն ոճով: Պիտի ջանանք տալ ամփոփ գծերով.

Խօսք առնել. - Ամուսնութեան տարիքը որոշուած չէ. սովորաբար տղաք 15, իսկ աղջիկները 12-էն սկսած կ'ամուսնացնեն: Օրորոցի ամուսնութիւնը խիստ սակաւ կը պատահի: Ամուսին ընտրելու պարագային ծագումը, դիրքը եւ օջախի հաւասարութիւնը նկատի կ'առնուի. խանութանը (տոհմիկ, օջախի որդի) խանազանի, հարուստը հարուստի եւ աղքատը աղքատի հետ կ'ամուսնանայ:

Երբ այր ու կին իրար համոզեցին, կը կանչեն տան քահանան եւ մեկ երկու մերձաւոր բարեկամ եւ կ'ուղարկեն աղջկան հօր տունը: Մինչ ասոնք ճամբայ կ'ելլեն, տնեցիները սանտր եւ շերտի միասին կը կապեն սիւնի մը, որ գացողները դատարկ ետ չդառնան: Գացողները, որոնք կը կոչուին ուզնկան, երեկոյեան, ուշ ժամանակ կը ներկայանան ապագայ խնամիին, «բարիբրկուն». «Աստուծոյ բարին», ըսելով կը նստին եւ» Ուզնկանները« իրենց այցելութեան նպատակը պարզելով՝ աղջկան հօրը կ'ըսեն «Խնդիրք մ'ունինք քրզնէ. քու օջախէն մարդութենի ումաճախ ունինք», այսինքն, եկած ենք քու աղջիկը ուզելու եւ իրար բարեկամ դառնալու: Աղջկան հայրը «Բարի էք էկի, հազար բարի, ձեր խնդիրք վըր իմ գլխուն ու երեսին, ամա ես ի՞նչ գինամ ո՞ն (ո՞վ) է, ոն չէ, վի՞ն (որո՞ն) է, վի՞ն չէ» ըսելով՝ ժամանակ կ'ուզէ խորհելու եւ պատասխան մը տալու:

Տնտես երթալ. - Եթէ խնամացուններն տարբեր գիւղէ են, իմանալու համար աղջիկ ուզողի տան ռաթաբը (սարքը), կարողութիւնը, ունեցած անասուններու քանակը, խնամացուի ծագումը, ինչ տեսակի մարդ լինելը՝ աղջկան տան կողմէ ծածուկ մեկը կ'ուղարկեն լրտեսի ձեւով վերոգրեալ

կարեւոր բաները քննելու, որ կը կոչուի «տնտես երթալ»:

Հարէ կըրըն (քրտերէն՝ այր). Ուզնկանները, որոնց կ'ընկերանայ նաեւ տղուն հայրը, կը ներկայանան աղջկան հօրը: Խօսակցութիւնը կը հասնի խնամութեան վրայ: Վերջինս կը յայտնէ, որ իր աղջկան թայն (նմանը) ամբողջ աշխարհ չի ճարուիր եւ թէ ծանր խալան պիտի առնէ: Մեր խնամացուն, թէեւ սիրտը կը տմփտմփայ, ծանրութեամբ ցոյց կու տայ որ ինքը խալանէն վախցող մարդ չէ: Երբ ուզնկանք նորէն կ'առաջարկեն հաստատելու խնամութիւնը՝ աղջկան հայրը այր՝ կ'ըսէ (քրտերէն՝ հարէ կըրըն): Տղայի հայրը կ'ելլէ եւ աղջկան հօր ձեռքը կը համբուրէ. իսկոյն մատանին կ'անցնեն հարսին մատը կամ զոյգ մը ապարանջան կամ թագ կամ շամպիէ կը յանձնեն խնամիին. այդ է Աշանը: Սեղան կը պարզուի, օղին մէջտեղ կու գայ եւ թեթեւ ուրախութենէ մը վերջ խնամիները կը մեկնին:

Նշանտուէք եւ երես դնելը. - Նշանտուէքի երթին կը մասնակցին ազգական, բարեկամ, դրացի. խումբը դհոլ ու գուռնայով կ'առաջնորդուի աղջկան տունը. սեղան սուֆրէք կը պարզուին. հարսին տրուած առաջին նշանի վրայ կ'աւելցնեն մի քանի նոր գուգս (զարգ), ոտնաման, թամազի (կարմրագոյն գլխու ծածկոց մետաքսէ): Այդ է նշանտուէքը. ապա բոլոր հիւրերը կարողութեան չափով կը նուիրեն հարսին՝ անասուն, փող եւ այլն, եւ սովորաբար գիւղի գլխը կամ կին մը մէջտեղ կու գան եւ մեկ նուիրելուն՝ բարձրաձայն կը պոռան. «Շէն մնայ քաւոր աղէն, երինջ մ'երկու հարսի երես...», որուն կը ձայնակցին բազմակունք՝ «Շէն մնայ, չէն» կրկնելով: Այս նուիրաբերութիւնը «երես դնել» կը կոչուի:

Նշանիտութեան ժամանակամիջոցը, խնամիներու յարաբերութիւն. - Նշանիտութեան ժամանակամիջոցը մեկ տարիէն աւելի չի տեւեր: Նշան դնելու օրէն հարսի լեզուն



182-2023

կը կապուի. դաշտ ու դուրաններ չափող, բանջար քաղող, դաշտի մէջ ոչխար կթող եւ ազատութեամբ մեծցած ազատորդի գեղջկուհին կը փակուի տան մէջ եւ իր սկեսրայրի տան անդամներու թուին համեմատ մեկմեկ ձեռագործ կը պատրաստէ:

Բարաբու (պարապու) եւ հարսնած. - Երբ տղուն հայրը իմացաւ որ իր հարսի «ոտք ու ձեռքը տեսնուած է» (այսինքն պատրաստ է), ինքն ալ պատրաստութիւն կը տեսնէ երթալու եւ «առօք փառօք» իր հարսը բերելու: Մեկ երկու օր առաջ 1-3 ոչխար, երբեմն եզ կամ կով մը կ'ուղարկուի աղջկան հօր տունը, որպէս զի կերակուր պատրաստուի հարսնածի համար (բարբառ):

Հարսնածի երթը. - Բոլորը գեղեցիկ երիտասարդներ են, քրդական շորեր հագած, ծոպերով փուշիք (գլխու սեւ փաթթոց) սրածայր եւ պուճ (ծայրը փոս) դըֆթիկ քօլօսներ կամ բազմերանգ նախշուած արախչիներու շուրջը փաթաթուած, ընտիր ձիերու վրայ հեծած, ձեռքերնին երկայն եւ հաստ փայտեր եւ ոմանք նաեւ զէնք առած՝ երգելով քրդական լօլօներ, ձիարշաւով եւ ջրինդով (մականախաղ) առաջ կ'երթան: Խուճը մը ձիաւորներ աղջկան գիւղի կողմէ կը դիմաւորէ հարսնածուն, ջրինդով մրցութիւնը կը սկսի, մեկն իր ձին, միւսն իր ձեռքի ոյժը կը փորձէ, մական կը ձգեն, հարուած կու տան, կ'երգեն եւ պուռով կը մօտենան գիւղին. բայց վերջին խմբի նպատակն է հարսնածից քօլօս փախցնել, որ եթէ յաջողուի, «հարսնածի» համար մեծ անպատուութիւն կը համարուի... Գիւղի առաջ ջրինդի եղանակը «գուռնածին» կը փոխէ տեսակ մը քայլերգի:

Երբ կը մտնեն գիւղը, խնամիին բարեկամները, ազգականները եւ դրացիները 1-2 ձիաւոր կը հրաւիրեն իրենց տունը, իսկ հարսի սկեսրայրն ու քաւորը իրենց

պարագաներով եւ «դհուլծին» ու «գուռնածին» խնամատունը կ'իջեւանին:

Ծաղկոց, հարսի գովք. - «Հարսնած»ի (հարսնառ) համար կը հրաւիրուին հարսի ընկերուհիները, բարեկամներու եւ ազգականներու աղջիկները, որոնք գիւղական քօլս մը (հիւղակ, տնակ) առանձնացած՝ կը սկսին խօսիլ, պարել եւ խաղալ, յետոյ հարսին վերջին տխուր ըրածներուն զայն մխիթարել. որովհետեւ ըստ սովորութեան հարսնացու աղջիկները տխուր կերպարանք ցոյց կու տան եւ կու լան հայրենի օջախէն բաժնուելու ժամանակ: Մտնենք «ծաղոցը». ահա հարսը գլխաբաց նստած է ընկերուհիներուն մէջտեղը եւ անոնցմէ քաղցր ձայն ունեցողը մորմոք ձայնով կ'երգէ. «Շէմկիկ, մի՛ ժաժա եւն.»:»

Ազգալուացք, Ազգա-Չարիներ. - Հարսնածի ճամբայ ելլելէն անմիջապէս վերջ փեսայի ընկերակիցներու շապիկները կը հաւաքուին յատուկ հրաւիրեալներու ձեռքով փեսայի տունը լուալու համար. այս կը կոչուի ազգալուացք, որ նշան է թէ այդ շապիկներու տէր երիտասարդները կը հրաւիրուին ըլլալու փեսայի Ազգա-Չարիները, այսինքն, ամուրի գօրքերը: Ասոնց գործն է պատրաստել 1. Նուրձը, փայտի մը ծայրը ամրացուած կլոր տախտակ մը, վրան հաստատուած չորս-հինգ փայտէ թռչնակներ եւ անոնց մէջտեղը՝ շարուած գոյնզգոյն պսակներ, ասոնց ալ ծայրերը տնկուած կեղծ վարդեր: Տախտակի մէջտեղը ամրացուած կ'ըլլայ ճիւղ մը եւ անոր ծայրերուն ցցուած նուռ կամ խնձոր: 2. Փեսայի գլխուն համար եռանկիւնածեւ պսակ մը՝ կազմուած գոյնզգոյն թելերէ եւ ծայրը տնկուած աքաղաղի երկու փետուր: 3. Թուր մը:

Փեսայի հագուաւոր. Ահա երիտասարդ մը բոլորովին նոր հագուստ-կապուստով: Գլխուն քրտական ճերմակ քոլոս մը, շուրջը փաթթած կարմիր եւ մանուշակագոյն փուշիկներ եւ անոնց մէջտեղը՝ վերոյիջեալ

պսակը: Մէջքը կապած պարսկական ընտիր շալ մը եւ վրան ամրացուած դաշոյն մը: Հագած է քրտական նեղ շափրք (անդրավարտիք), ոտքերը կարմիր երկարափող ճեզմէ կամ կոնդուրա. Ուսերու վրայ նեղ շափրք (անդրավարտիք) մը, ոտքերը կարմիր երկարափող ճեզմէ կամ կոնդուրա. Ուսերու վրայ ձգած է ֆարաճայի նման լայն ու երկար չուխա դալման եւ հպարտօրէն կանգնած է ազգա-չարիներու մէջտեղը:

Պսակէն մեկ օր առաջ Ազգա-Չարիները փեսան կը լողացնեն՝ տակը երկաթի կտոր մը դնելով որ չարքերը չվնասեն:

Պսակ. Երբ լուր կը տրուի փեսային, թէ հարսը կու գայ, ազգաչարիները փեսան շրջապատած ճամբայ կ'ելլեն: Միւս կողմէ կիներու եւ աղջիկներու խումբ մը հարսը մէջերնին առած կ'երեւան: Երկու խումբերը ծանրաքայլ կը յառաջանան դէպի եկեղեցի:

Գիւղի ամբողջ հասարակութիւնը ներկայ է. գուռնան ուժով կը փչէ թեւխաղի եղանակը նուազելով: Տեսնելու է թէ ինչպէս փոքրիկ աղջիկներ ձեռքերնուն թաշկինակները ծածանելով «Չաչան-խրզի» կը պարեն:

Պսակի խորհուրդը կատարուած ժամանակ զոյգը ծունր դրած կ'ըլլայ գլուխ գլխի: Պսակէն վերջ քահանան կ'եղանակէ «Առաւօտ լուսոյ» եւ գուռնածին եկեղեցւոյ դռնէն առնելով նոյն եղանակը՝ քիչ մը կը շարունակէ եւ յետոյ դարձեալ թեւխաղի կը փոխէ:

«Թեւխաղ»ով ու «Չաղան-խրզի»ով թարթը կը հասնի տան դուռը, ուր սկստուրը չորս հատ լաւաշ ձեռքն առած՝ պարելով կ'ընդառաջէ նորագոյգ ամուրի ու հացերը խաչածեւ կը ձգէ հարսին գլխուն: Երբ տան ցուէքին կը մօտենան, վերէն չամիչ եւ ընկզի կթուն կը ցփնեն հարս ու փեսայի գլխուն: Ներս մտնելով՝ քահանայի առաջնորդութեամբ՝ զոյգը իր շրջապատողներով միասին «եօթը փաթ» թոնի-

րի բոլորը կը պտտի եւ հանդէսը կը վերջանայ հերիսայ ուտելով:

Իսկ հարսնեւորները տաւուլ-գուռնայով կը պարեն «լէն ու երկայն» ախոռին մէջ գրեթէ մինչեւ առտու³⁵:

Ծանօթ.- Ազգազարական Հանդէսը կու տայ թանկագին ծանօթութիւն մը Պուլա-նըքի պարերու մասին 12 տեսակ պարերով. 1. Թռռէ (թռչելով պար), 2. Քոչերի, 3. Շորոր, 4. Խարսոյ շորոր, 5. Բասեն պարի (Բասենի պար), 6. Բելանդարի, 7. Գորանի, 8. Եարմ գորանի, 9. Գլորիջան, 10. Չախ պար կամ ջուճ, 11. Թագուորագովք, 12. Հարէ Մայմոյ:

Թորքէ-պարի բառերը.

Որ շթոնայ գիտայ պար, Ոտներ կոտրի ֆիռնայ ֆար. Կտրի ընտրա ճար ու վար: Լէն տուն ու բոլոր երկէն, Խորոտկներ իմ գերգէն. Սուն ու գերան բար պիտէ, Մրտով սիրով եար պիտէ:

Որ շթոնայ գիտայ պար, Ոտներ կոտրի ֆիռնայ ֆար: Սարէն իջայ եկայ ցած, Կգայ վերցի թաժայ ցաց, Անտրի շուն գիս էխած, Ընձի ի՛նչ խածել պիտէ, Ընձի գերկ ու ծոց պիտէ:

Որ շթոնայ գիտայ պար, Ոտներ կոտրի ֆիռնայ ֆար, Չուն թալի սարեր լորխի, Չիմ եարն ու ֆուճ թըմ փոխի, Եարոջ սէնջին չըմ կոխի, Չուխտակ սարեր հովն ընկաւ, Չուխտակ ջէյրան ծովն ընկաւ:

Որ շթոնայ գիտայ պար, Ոտներ կոտրի ֆիռնայ ֆար:

35 Ազգազարական Հանդէս, Թիֆլիս, 1900, էջ 72-3:

ԽՆՈՒՍԻ, ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ԵՒ ԱՆԼԱԹԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Նազարէթ Պ. Մարտիրոս ստորագրող յօդուածագիր մը Պոլսոյ Բիւզանդիոնի մէջ «Ամուսնական Պատկերներէն» խորագրի տակ կ'ուզէ ծանօթացնել «Մշոյ դաշտի, Պուլանդգի, Խնուսի, Մանազկերտի եւ Ախլաթի մէջ տիրող ամուսնական արարողութիւնները»: Կը քաղենք.

Ազպուրիւն. Շինականուհին 12 տարիքը թեւակոխելէն յետոյ արբունքի հասած է, բայց 18-22-ին հազիւ կ'ամուսնանայ: Կանխահաս ամուսնութիւնը գիւղացիներու մէջ մեղադրելի ու այպանելի է, բայց վերջերս այս կողմերն ալ, մանաւանդ Խնուսի մէջ, ժողովուրդը սկսած է այն որդեգրել:

Հագուստ-կապուստ. Հոս տեղական տարազի ամենայաւ ձեւը եւ ամենխաս կտորը կը հագնին: Կը հագնին Հալպու չիթարէն իբր էնթարի, վրան կը կապեն նախշուն պարեգօտը, էնթարիէն վար կը ֆռֆրուայ ճերմակ շապիկը. կրծկալ ունի ատլաս սրտանոց. թեւերը անցուցած խնայուղ թեւնոցները, երեսն ի վար, վզնոցն ի վար կը կախէ կեարտանլըգ՝ արծաթէ թփիկներով. գլուխը կը դնէ վաղեմի գագաթը եւ ճակատը կը կարէ քանի մը քառասունոցներ (ոսկի) ու արծաթէ փարեկներ. սիպտակ ձեւները նախշած Աճմուխաս հինով:

Այս զարդարանքէն ետ չի մնար նաեւ խորթը (երիտասարդը, տղան). ան ալ ունի իր ուրոյն տարազը. - Սղերդու ապէն, ճերմակ քոլոսը՝ բոլոր կապուած Աճմու փուշին, կանաչ-կարմիր ապլախով, մատանշալվար, թէեւ չեն հասնիր աղջկան զարդարանքին, բայց անկէ շատ վար չեն մնար:

Մանչը կ'երգէ քրտերէն. - «Պեր ի վանօ, քուպար ուպար տը մաշինի» (Պերուոր, հպարտ հպարտ կը շորորաս):

Հարս ըմտրելու կերպը: Գիւղացի տղան կամ աղջիկը քաղաքացի տղուն կամ

աղջկան պէս ծնողական կամքին տակ չէ ամուսնանալու պարագային. երբ աղջկան ուզնկան դուռը ծեծէ եւ կամ տղան կամք յայտնէ, անոնց «այո»ն առնելով կ'ամուսնացնեն: Այս կողմերը աղջիկ մը 1-2 տարի նշանու կը մնայ, բայց քաղաքացիի պէս տօնական օր երթալու գալու սովորութիւն չկայ:

Ճրճէգ եւ խալան. - Աղջիկը չափահաս եղած օրէն ինքը եւ մամը (մայր) աշխատելով կը պատրաստեն «ճըհէգը» (օժիտ): Առաջին առիթով միայն անոր մամը 1 ձեռք տնծուրի հագուստ կը կարէ, որ իր աղջիկը հագնելով մարդամէջ երեւնայ. իսկ ապագայի պահծուրի հալան տղու կողմէն առնուած խալանով կը հոգացուի յետոյ: Գիւղացի աղջկան ճըհէգն ասոնք են. նախ հողէ փեթակ մը, որուն մէջ պիտի տեղադրէ իր հուր ու մուրը, կը մանէ ու կը գործէ գոյնգոյն մանածներ՝ 40-50 գոյգ գուլպայ, 10-20 հատ արախլի ճերմակ ու նախշուն, 20-30 գոյգ մեղր թել ու սրտանոցի թել, 10-20 լոխթայ-կապ (ձիու կամար), 15-20 ալ սարիկ մածնի բզկին համար: Որոշուած օրերուն ասոնցմէ նուէր կու տայ կեսրանց կողմէ եկողներուն, որոնք բեռով ու բարձով իրեն աչքի լուսի կու գան տարուան որոշ օրերուն:

Խալան կ'առնուի տղու կողմէ: Այս խնդիրը բարդ հարց մըն է, երկու կողմի տնեցիներուն ալ քանդման, կործանման պատճառ կ'ըլլայ... նորաստ խալանով աները կը հոգայ աղջկան վրայ գլուխ, ոտք ու ձեռք: Նախ քանի մը խաս թելէ (մետաքս) էնթարիներ, ոտքերուն (վարտիք), շապիկ, ճուպէ: Ապա ձեռք մը անկողին ու դոշակը:

Կթխայ. Հարսները կը կազմեն ամբողջ գիւղի ազպները, խորթերը (երիտասարդ) եւ երեւելիները: Հարսներները, առանց փեսայի տուն բրդուճ մը ուտելու կ'երթան հարսի պապու (հօր) տունը. հարսի տան կողմէ պատրաստուած կայ աւան-

դական «հերիսէ»ն: Նահապետական սեղանը գլոր-մլոր առաջ կու գայ. հարսնածը կը սկսի կոնծել կարմիր գինին երգելով.

Կարմիր գինին բառն էր Չինի,
Կոնծենմ մեզի համով լինի:

Գլուխները քիչ մը տաքնալէն վերջ, տան քաւոր-աղան առաջ նետուելով կ'առաջարկէ լանկառին (ափսէ) բերել եւ կթխայի արարողութիւնը սկսիլ: Բարձր ձայնով կը կոչէ. «Խնամտի՛ք, հրամեցէ՛ք հարսի երեսը». հարսնածի քսակները կը բացուին ու կը շնկոցնեն արծաթն ու կիսնոց ոսկին: Նուէրի այս դրութիւնը (որ «կթխայ» կը կոչուի), աւարտելէն յետոյ, հարսի մամը (մայր) հարսի ճըհէգէն կու տայ նմոշներ, գուլպաներ եւ այլն, նուէրի համատուրեամբ: Հանգանակուած գումարը կը յանձնուի հարսնամօր ի նպաստ հարսին գործածուելու»³⁶:

ԽՈՅԹԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մեզի ծանօթ է միայն «Խոյթի հարսանեկան պարերգ» մը, որ հետեւեալն է.

Ամպն էր երկիմ հովն անոյշ,
Սիրեկանիս բունն անոյշ,
Տարին տասներկու ամիս՝
Թոռմա խնձորն ի գօտիս:

Խնձոր ի կէս խածուկ էր,
Չորս ֆոշէն արծթուկ էր,
Տանիմ, ի տամ ոսկերի՛շ՝
Շինէ մատնիք ապրեան
Տամ ետրոջ իր ֆոջ:

Ամպն էր երկիմ, հովն անոյշ,
Ետ խորտիկ պաքն անոյշ³⁷:

ՎԱՆԻ ԵՒ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՎԱՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1. Վանէն թղթակից մը «Նոր հարսեր հին ատեն» վերնագրի տակ կը ներկայացնէ Վանի հարսանեկան սովորութենէն հետեւեալը՝ խօսելով 1850-ական թուականներու մասին:

Նախ նշանտուքի ատեն աղջիկը քողարկուած պէտք է ներկայանար այն երեք-չորս կիներուն, որոնք կեսրանց կողմէ կու գային գինքը քննելու: Խեղճը կենդանի արձանի մը պէս անոնց քմահաճոյքներուն կ'ենթարկուէր, որոնք քննել կը սկսէին ոտքէն մինչեւ գլուխ... Եթէ որեւէ արատ մը չգտնէին, անմիջապէս երեսներն համբուրելով մատանի մը կը մտցնէին մատն իբրեւ նշան եւ անկէ ետք կ'ուտէին ու կը խմէին երկուստեք գոհուանակութեամբ: Իսկ եթէ ասոր հակառակը տեսնէին, իսկոյն վեր կ'ելլէին առանց ուտելու եւ խմելու կ'երթային...

Հարսանիքը այն ատեն եօթն օր եւ եօթն գիշեր կը տեւէր... Այս ամբողջ շրջանին մէջ հարսը պարտական էր շատ քիչ ուտել, խմել ու քնանալ, շատ անգամ ոտքի վրայ կանգնած մնալ... ոչ ոքի հետ խօսիլ... Թանձր քող մը կրել, որ խոշոր գնդասեղով մը գլխու խոպոպներուն կառչած՝ մինչեւ ծունկները կ'իջնէր: Ան պարտական էր ուշ պառկիլ, առաւօտները էն շուտ ելլել, քնացողներուն զգեստները հանել, հագուեցնել, լուացուելու համար անոնց ձեռքերուն ջուր լեցնել...»³⁸:

2. «Սմբատ» ստորագրող յօդուածագիր մը ակնարկ մը ունի Վանի Հայ ժողովուրդի ամուսնական սովորութեան մասին: Ան կը գրէ Վանէն 1882-ին.

Նշանախօսութիւնը... մեծ մասամբ կիներուն թողուած է, կը կատարուի մասնաւորապէս եկեղեցւոյ մէջ, ուր միայն դիւ-

36 «Բիւզանդիոն», Կ. Պ., 1908, թ. 344:

37 «Բիւրակ», Կ. Պ., 1898, էջ 739-40:

38 «Բիւզանդիոն», Կ. Պ., 1899, թ. 820:

րութիւն ունին կիներ իրար տեսնելու, օրիորդ դիտելու... ամբողջ տարին կ'աշխատին, կը տքնին կիներ կամ օրիորդներ զգեստեղէն պատրաստելու, որպէս զի կիներուն յատուկ օրերն եկեղեցի երթան... այն օրիորդը, որ եկեղեցի երթալէ կը զրկուի զարդեղէն չունենալուն համար, որովհետեւ առանց անոր դուրս ելլել անկարելի է, հարսնութեան հաւանական յոյս կը կորսնցնէ գէթ նոյն տարուան համար... Որո՞նք են եկեղեցի երթալու կիներուն յատուկ կամ սովորական օրերը. - գլխաւորապէս Ծաղկազարդի եւ Աւագ Ծաբթու օրերը ... Ծաղկազարդը այն օրն է, որ նոյն տարուան նոր հարսերը... եկեղեցի կը տարուին մեծ շուքով ու հանդէսով... Եկեղեցիէն զատ կիներուն համար երկրորդական տեղերն են ազգականներու տունները հարսանիքի առթիւ եւ ուխտավայրերը ուխտազնացութեան առթիւ... որ խիստ նուազ կը պատահին»³⁹:

ՎԱՆԻ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԿՈՒՍՊԱՆԻՑ ԳԻՒՂ

Հարսանիքի նկարագրութիւնը վիպական ձևով տուած է Վանեցի Ա. Կ. Պելերեան 1870-ին: Կը քաղենք հակա մասերը:

Հարսանիքը կը սկսի ուրբաթ օր մը:

Ուտելիք. - Հարսանիքի համար կը պատրաստուին բազարը (կաթա) եւ փոխինդ, ինչպէս նաեւ տեսակ տեսակ կերակուրներ: Ըմպելիքն է գինին, որ կը զբտնուի տիկերով:

Պսակ շինել. - Փեսայի քոյրերն ու ազգականուհիները փեսայի գլուխը դնելու համար մասնաւոր պսակ մը կը շինեն կարմիր կանանչ բուրդերով: Իւրաքանչիւրը կը ջանայ սակայն լաւագոյնն ու գեղեց-

կագոյնը շինել, որովհետեւ յետոյ շինուածներէն ամենագեղեցիկը պիտի ընտրուի:

Փեսայն ածիլել. - Այրերը, կիները շրջանակ մը կը կազմեն, փեսան իրենց մէջտեղ, ամենքը կը նստին: Կու գայ սափրիչը եւ կը սկսի իր գործը՝ օրհնուած եւ անապակ գինիով երկար լուալով: Ածիլած ատեն փոքր դրամի մեծութեամբ բոլորակ տեղեր կը թողու, որպէս զի ծնողք եւ ազգականներ դրամ վճարեն այդ բոլորակներն ածիլելու համար: Առաջին վճարողը փեսային հայրն է, զոր հրակիրելու համար ներկաները կ'երգեն:

Թագաւորի հայրը կայնած պէտք է,
Թագը շրջել, շրջել,
Շուրջ դառնար,
Բարով այս տունը գար:

Անմիջապէս փեսայի հայրը տեղէն կ'ելլէ եւ իր նուէրը կու տայ - չորս եալմա (քոլոգի վրայ փաթթելու), մեկ արախճին եւ ուրիշ մանր բաներ: Բոլորակ մը կ'ածիլուի: Նոյն երգը կը կրկնուի յետոյ մօրը, քրոջը եւ ազգականներուն համար, որոնք որեւէ նուէր մը կու տան:

Ուոց. - Ծանօթ խաչածեւ փայտն է, վրան գոյնզգոյն ապրշուամներ փաթթուած եւ մրգեղէններ շարուած, զոր կրելու իրաւունք ունի աճուրդի մէջ եկեղեցւոյն կամ վանքին մեծագոյն նուէր տուող Ազապպաշին, որ փեսայէն անբաժան է:

Աղուէս. - Ընտիր ոչխար մը ծաղիկներով կը հիւսեն, կը զարդարեն ամբողջ մարմինը. ճակատը կը հինայեն եւ քաջ երիտասարդի մը յանձնելով մանչուն կողմէն աղջկան կողմի խնամիին տունը կը դրկեն. տանողը «աղուէս»ն է:

Հարսի հիւր երթալ. Օրը շաբաթ է: Կոխպանցիք կը պատրաստուին հարսին հիւր երթալու: Կը հագնին իրենց տօնական զգեստները. աչքի կը զարնեն գոյնզգոյն խազմաներով փաթթուած երկայն քոլոգները անոնց գլխուն վրայ. ձեռքերն ունին

39 «Թերմեւանը Էֆքեար», Կ.Պ., 1882, Թ. 1409: Տես նաև «Ազգ. Հանդէս», 1910, էջ 142-62; «Արձագանգ» 1897 Թ. 23, 27: «Հայրենիք», 1952, Թ. 12, 337-41:

բարակ գաւազան մը, ոմանք սուր մը եւ ուսերուն վրայ վահան: Կնքահայրը եւ ուրիշ քանի մը հոգի ձիաւոր են եւ խումբին առջեւէն կ'ընթանան: Խումբին ետեւէն կը տարուի՝ զոյգ մը եզներու վրայ բարձուած՝ հարսանիքի ուտել-խմելիքը՝ հաց, կաթա, փոխինդ, 3-4 ոչխարի խորոված, օղի եւ այլն: Սովորութիւն է, որ հիւր գացած տեղը իրենց պարենով կերակուրին: Այս ամբողջ խումբը քսան երիտասարդներէ կը բաղկանայ եւ իրենց առաջնորդն է զուռնա-նաղարան (տաւուլ):

Հարսնած. - Կնքահօր փոխանորդը եւ փեսայի եղբայրը երկու կողմէն հարսին թեւը կը մտնեն տան դռնէն դուրս հանելու համար: Այդ միջոցին կնքահայրը 200 հատ մեկ-փարանոց, ի պատիւ հարսին, անոր գլխուն վրայ կը ցրուէ, իսկ դուռը բռնողին գլխուն քոլոգին ծայրը մեծկակ շալ մը կը փաթթէ իբր նուէր եւ նուէրներ տալով ասոր անոր՝ կը հրամայէ, որ իր ճերմակ ձին մօտեցնեն, որուն վրայ կը հեծցնէ հարսը եւ հարսանեկան խումբը կը սկսի քալել զուռնանաղարայի առաջնորդութեամբ:

Հարսին քովէն կը քալէ պառաւ կին մը («հարսնքոյր»), որ ձեռքին մէջ կը կրէ վառուած մեծ մոմ մը:

Փեսայի կողմը. - Ազապներու խումբ մը փեսան հագցնելէն վերջ գայն իրենց մէջտեղ կ'առնեն. Ազապ-Պաշին մեկ ձեռքին մէջ ուռցը, միւս ձեռքին մէջ դրօշակաւոր թուր մը բռնած՝ կը կենայ փեսային կողքին: Ասոնք «հարսնած»ի խումբին կը սպասեն: Երբ վերջինս բաւական կը մօտենայ, Ազապ-Պաշին իր դրօշակաւոր թուրը կը բարձրացնէ եւ ծածանեցնելով կը պոռայ.

«Տոստըմըզ, մը՞զ, մը՞զ, մը՞զ, տո՞ստ...»: Այսինքն, բարեկամնիս էք: Ասոր ի պատասխան դիմացէն կը գոչեն. «Տոստըմըզ, նըզ, նըզ, տոստ...»:

Յետոյ միանալով երկու խումբերը՝ կը մտնեն եկեղեցի, ուր կը կատարուի պսակի խորհուրդը: Եկեղեցիէն ելլելով բազմութիւնը երկուքի կը բաժնուի. երիտասարդները՝ էրիկ մարդոց հետ փեսային առջեւ կը շարուին, իսկ օրիորդներն ու կիները հարսը կը շրջապատեն:

Հովուուհիները կ'երգեն.

Լուսնակն էաւ սարի ծոցէն,
Փթթեցոց ծաղիկի վրմէն.
Խորոտ փոքերս ձեռք տանք ձեռաց,
Պարենք, երգենք մէջ մեր դաշտաց:
Ապրեն մեր ծնողք,
Ապրեն եւ մեր հօտք:

Կարմիր կակաջն եւ գինարբուն,
Քաղենք, շարենք վեր մեր գլխուն,
Ասենք, խնամանք չում իրիկուն,
Խմենք ձորիս ջուր պսպղուն:
Ապրեն մեր ծնողք,
Ապրեն եւ մեր հօտք:

Թող մեր տոտերն ըլնեն բոպիկ,
Թող ցիր ցրուին մեր խոպոպիկ,
Խորոտ փոքերս ձեռք տանք ձեռաց,
Պարենք, ասենք մէջ մեր դաշտերաց:
Ապրեն մեր ծնողք,
Ապրեն եւ մեր հօտք:

Երկուքի բաժնուած հարսնեւորները մոմերով, ծաղիկներով եւ զուռնանաղարայով փեսայի տունը կը հասնին, ուր կ'երգեն.

Թագաւորի մեր դուրս էլի,
Քէ ինչ եւ ինչ ենք բիրէ,
Քէ կէօլի կազ ենք բիրէ,
Տախտ ափիղ ենք բիրէ,
Թոնէր վառող ենք բիրէ,
Ոչխար կթող ենք բիրէ:

Փեսայի մայրը եւ հօրեղբոր կինը ներսէն դուրս կու գան. մայրը՝ մեկ ձեռքը գինւոյ սափորը բռնած, միւսովն ալ գլխուն դրուած սկաւառակ մը, որուն մէջ բաղարջ եւ փոխինդ է շարուած, իսկ հօրեղբոր կինը երկու ձեռքով բռնած է հողէ

մեծ նոր պնակ մը եւ այս դիրքով այս երկուքն ալ կը պարեն՝ վերի երգի եղանակով: Մինչ հարսի եւ փեսայի առջեւ երկու ոչխար կը զոհեն՝ այս դին փեսայի հողորկինը իր ձեռքերուն մէջ բռնած խոշոր պնակը տետին կը զարնէ՝ պոռալով:

Կտորի քեսիմ,
Ապրի փեսէն:

Ասկէ վերջ երկու հոգի հարսին թեւերը մտնելով կը տանին, յատուկ թախտին վրայ կը բազմեցնեն: Հրաւիրուածները կը ճաշեն, յետոյ խաղտուն երթալով քաւորի հրամանատարութեամբ մինչեւ լոյս կը պարեն զուռնա-նաղարայով⁴⁰:

ԼԵԶՔ ԳԻՒՂ

Լեզք Գիւղի հարսանիքէն երգ մը կը յիշուի 1840-ին երգուած ծերունագարդ Տէր Սարգիս քահանայէն, որով երգին հնութիւնը կը բարձրանայ մինչեւ 1800-ի սկիզբները:

Հաւաքած է Եղեսայի ծանօթ գրող մը – Գ. Կ. Ո. եւ տուած է զայն մաղթերգ վերնագրով: Ահաւասիկ.

Ե՛կ քարե ձեզ, ե՛կ քարե,
Եկողներուն շատ քարե,
Արեգակին տանք քարե,
Որ թագաւորին տայ շատ արե:

Ե՛կ քարե ձեզ, ե՛կ քարե,
Եկողներուն շատ քարե,
Արշալուստն տանք քարե,
Որ նոր հարսին տայ շատ արե:

Ե՛կ քարե ձեզ, ե՛կ քարե,
Եկողներուն շատ քարե,
Լուսնկային տանք քարե,
Որ հարս-փեսին տայ շատ արե⁴¹:

ԿԻՒՍՆԻՆՑ ԳԻՒՂ

Վանայ Կիւսնինց գիւղը 80 տնուոր հայ գիւղ մըն էր: Հարսանիքի մասին պատմողն է «Սմբատ», որ ահանատես եղած է Կիւսնինցի հարսանիքի «Կալան կտրելուն»: Վերնագիրն է. «Կալան ի՞նչ պէս կը կտրեն»: Հետաքրքրութեան համար յառաջ կը բերենք, ինչպէս որ է:

«18...նոյ. 28-ին, Կիրակի օր մըն էր: Վանայ Թիմար գիւղախումբի Կիւսնինց գիւղն ամենուն բերանն սա խօսքն էր, թէ այսօր Պայրակայ գիւղէն պիտի գան Ընէս Խաչոյի աղջիկը՝ Մարան ուղեւու եւ անոր կալանը կտրելու: Թէ՛ Կիւսնինց թէ՛ Պայրակ նշանաւոր գիւղեր էին Թիմարայ մէջ, Մարմեր գետի ձախ եզերքը: Պայրակայ Ընէս նախօն Կիւսնինց պիտի գար Մարանի ձեռքը խնդրելու իր մանչուն՝ Մարկեոյի (Մարգար) համար: Մարան 17, Մարկեոն 20 տարեկան էր: Զիրար տեսած չէին. թե՛րեւս իրարու անունն ալ չէին գիտեր:

Ժամը 8-ին բոլոր Կիւսնինցիք տուներէն դուրս ելան եւ տանիքներուն վրայ թափեցան տեսնելու Պայրակայ խնամախօսներուն գալը: Ընէս նախօն իր ամբողջ մեծավայելչութիւնը կը ցուցադրէր: Եօթն պատուաւոր իշխաններ (գիւղի երեւելիները) Պայրակայ կամ մօտակայ ուրիշ գիւղացի, ամենքն ալ ձիաւոր եւ իրենց ունեցած գեղեցկազոյն հագուստներով: Ընէս Խաչոյի տղաքը, եղբորորդիներն ու ծառաները հասան անմիջապէս եւ Պայրակայի հիւրերու ձիերն առին եւ զիրենք տուն առաջնորդեցին, ուր Ընէս Խաչօն շրջապատուած Կիւսնինցի իշխաններէն եւ քահանաներէն՝ բազմած էր վերին գլուխն եւ կը ծխէր:

«Բարի եկաք, բարի տեսաք»ի խօսքերէն վերջ Ընէս Պիտօ, Ընէս Նախոյի կնքահայրը օրուան խնդրոյն գալով՝ որոշ եւ հնչուն շեշտերով խօսեցաւ հետեւեալը. – «Ռէս Խաչօ, Աստուծոյ հրամանաւ եկած ենք քո աղջիկ Մարան ուղեւու Ընէս Նախոյի լաճ Մարկեոյին. հիմա հալան պիտի

40 Ա. Կ. Պէլլերեան, Գեղջկական Հարսանիքն ի Հայաստան, Կ. Պ., 1870 էջ19-58:
41 «Արեւիք», Կ. Պ. 1891, Թ. 2231:

կտրենք. թէ որ ոյկուն (յարմար) բան մը պիտի ուզես, խօսինք, թէ ոչ ելնենք երթանք, իսկի բերան չբանանք: Քո ոչ հացը պիտի կտրենք, ոչ կահուէն խմենք մինչեւ հալանի որոշում չտաք. ուզի, տեսնանք ինչ պիտի ուզիս. նսաֆազուլիւն չանես վէր քու աղջկան պախտին չնստես. հրմէն վախիք Մարկեոյի պէս փեսացու, Ընէս Նախոյին պէս խնամի չես կրնար գտնել»:

«Ընէս Պիտօ, Ընէս Պիտօ, պատասխանեց անդիէն Ընէս Խաչօն իշխանական շեշտերով: Ինձի կ'ասես Ընէս Խաչօ, աչխարհ գիտէ ինչպէս մարդ եմ. խապրի սաղն եւ կարճն կը զրուցեմ. – ձեզի կիւ վէնմիշ եղած էք որ եկեր էք իմ աղջիկս ուղեւու. գալուց առաջ մեկ հեղ վրանիդ մտածե՛ր էք թէ վե՛ր տուն կ'երթաք, վե՛ր աղջիկ կ'ուզէք... ձեր ձիերաց կէմը բերնեղնէն առնել չեմ տուեր. թէ որ պակաս պիտի շարժիք, քան աղէկ չկայ, ելէք եօլով գացէք նա ֆիլա տեղ զրոց չանենք, ես վախ չունիմ աւելորդ: խօսքեր լսելու, ոչ ալ փուճ տեղ բերան կը բանամ: Հիմա խօսքին կարճը. ասէք նայիմ ի՞նչ հալան պիտի տաք»:

Ընէս Պիտօ երկրորդ անգամ խօսք առնելով ըսաւ. «Աղէկ մտածէ Ընէս Խաչօ, տես ո՞վ է որ քո տուն եկած է. – Պայրակայ Ընէս նախօն քաղքէն (Վան) պիլէ կրնայ հարս պիտի, հէմ էլ հալալ չտալ: Բայց զըսմէթ անանկ բերաւ որ քո տուն եկաւ հարս ուղեւու. թէ որ ոյկուն բան մը պիտի ուզես, գործը եօլայի կը մտնի, թէ որ չէ իսայ, սեպէ թէ ոչ եկեր ենք, ոչ գնացեր ենք: Աղէկ որ դու կ'ասես թէ կարճ կը զրուցեմ, ուզի, տեսնենք ի՞նչ պիտի ուզես... մալ քոն ի, պէտք է դուն ասես առաջ ինչ որ կ'ուզես, իրաւունք չունիս սպասել որ առաջ մենք տանք»:

Որ էդա մալա ի, ընդմիջեց Ընէս Խաչօն, ես կ'ուզիմ. 20 հատ դեղին օսմանցի ոսկի, 5 հատ կարմիր ոչխար, 10 կեաղ լաճ-վարդ չուխա, 4 ջուխտ կոնտուռա, 12

ջուխտ նիշուն թաթ, 6 հատ սիպտակ արախչի, շումայ չիւթարից 1 ձեռք զոքանչ բերդի՝ մանիսա աստառով: Իսկ հարսն էլ, ինչպէս քո անուան լայիխ ի, կը ճհէգես, կը տանիս: Բանիդ կու գա՞յ, Ընէս Նախօ, չէ իսա՝ մեկ մեկու գլխացաւութիւն չի տանք, մենք բարեկամ մարդ ենք, բարով եկաք, բարով երթաք»:

«Էդա ի՞նչ դու ուզեցիր, պատասխանեց Ընէս Նախօն, կը նշանակէ թէ չես ուզեր մեզ հետ խնամութիւն անել. զօռով չի՞ ես, փառք Աստուծոյ, ոչ քո հացն ենք կերեր, ոչ քո ջուրն ենք խմեր. իշտէ կ'երթանք, թէ որ քո աղջիկ պիտի պահես, թուռչի բռնես՝ ի՞նչ կրնանք ասել, էն էլ դուն գիտես»:

Այս ըսելէն վերջը Ընէս Նախոյի եւ ընկերներուն մէջ մեկնելու համար շարժում մը սկսաւ, գոր նշմարելով Կիւսնինցի միւս բազմականներն ամենքը մեկէն պոռացին. «Երթալն ի՞նչ պէտք է, դուք ալ տուէք նայինք ինչ կու տաք. Ընէս Խաչօն ուղեց, խօ ուզածն պիտի չիտաք, մէյ մը տեսնենք ձեր տուած ինչ ի»:

«Ես պազարլիսի մէջ սովորութիւն ունիմ որ ետին խօսքն առաջ կը զրուցեմ, ըսաւ Ընէս Նախօն, իշտէ իմ տալիքը. 15 հատ սիւտակ մէծիտ, 1 սագօցու չուխա, 1 ոչխար, 4 ջուխտ թաթ, 1 ջուխտ կոնտուռա եւ 1 զոքանչ բերդի էլմատին մանիսայից եւ Վանայ շիլայից աստառով. . . Իմ հարսն ալ կը ջհէգեմ կը տանիմ, ինչպէս որ ինձի կը վայելէ: Բանիդ կու գա՞յ Ընէս Խաչօ»:

Ընէս Խաչօն փոխանակ պատասխանելու իր ծառան կանչելով պոռաց. «Ոյօ, ընէսներաց ձեանքը քաշէ» (խզուած նկատելով բանակցութիւնը) եւ ինքը ելլելով՝ դէպի դուռ ուղղուեցաւ: Բայց թէ՛ Կիւսնինցի միւս բազմականները եւ թէ՛ Պայրակցիները միահամուռ ձայն վերցնելով՝ ըսին. «Ընէս Խաչօ, Ընէս Խաչօ, ադ քո երթալը մեղի քարի զարնել է. թէ որ դուն եւ Ընէս Նախօն միայն պիտի խօսէիք, էլ մեր

աստեղ գալ նստել ի՞նչ պէտք էր. մենք ալ երկու խօսք ընելու իրաւունք չունինք. նստէ հալա, խօսք մ'ալ մենք կ'անենք թէ որ երկու կողմին ընդունելի եղաւ, աղէկ, թէ որ չէ՝ նորէն գնա»։ - Ընէս խաչօն դարձաւ իր տեղը, բայց չկրնալով համբերել այսպէս խօսեցաւ.

«Ձուրը սանդի մէջ լեցնել ծեծելէն ի՞նչ կը հասկցուի... էտա կալա՞ն էր, որ իտուր Ընէս նախօն. միթէ ես լօ՞ւն (ճրի) իմ գտեր իմ Մարան, որ լօւն կուրուսիմ: 17 տարի հաց իմ կերուցէ, հալա իմ հագուցէ, 17 տարի էլ մնայ, իմ ումուր չի... իր պողպակից շատ աւելի կը վաստկի. օրական 1 չափ ցորեն կը քաղէ, օրը 500 փթեր կրնայ թխել, 60 օխա բեռ կը շալկի՝ օ՞ք պիլէ չ'ընեն... Աստուած կապուլ կ'անի՞ որ 15 մէծիտ կալանի տամ այնպիսի աղջիկ, որոյ ոտքը կոխած տեղը կանանչ կը բուսնի, նետած քարը ոսկի կը դառնայ... Հիմայ դուք ասէք, Ընէսներ... ի՞նչ կ'արժի իմ աղջիկ. դուք որոշեցէք»: Ընէս նախօն ալ իր կամքը ներկայ Ընէսներուն տուաւ: Այն ատեն... Կիւսնինցի Տէր Պետրոսի հաշտատար միջնորդութեամբ համաձայնութիւն գոյացաւ հետեւեալ կերպով. - 5 ոսկի, 2 սագոցու չուխա, 2 գոյգ կոնտուռա, 6 գոյգ գունաւոր գուլպայ (թաթ), 2 ոչխար եւ 1 գոքանչ բերդի հասարակ չիթարոյից եւ բաղիշու շիւրա աստառով: Իսկ հարսի օժիտն ալ Ընէս խաչօի արժանապատուութեան թողուցաւ:

Համաձայնութիւնը գոյանալէն ետքը բարեկամական սրտազեղումներ տեղի ունեցան, փոխադարձաբար խնամի կոչել սկսան զիրար, սուրճ, օղի, գինի առատ սեղան եւ պտուղ մեծարուեցան: Ուրախութիւն, խաղ, պար, նուագածութիւն յաջորդեցին եւ բոլոր Կիւսնինցի թնդաց թէ 5 ոսկի հալան կտրուած է Մարանին, որ աննշան գումար մը չէր սեպուեր (1897-ին):

Իսկ ինքը Մարան անտեղեակ այս եղածին, դրացիի տան ներսի կողմերը քա-

շուած՝ հասակակից ընկերներու հետ կը խաղար, մինչ Մարկեօն ալ Պայրակի երիտասարդներու հետ լեռ գացեր էր աղուէս որսալու»⁴²:

ԾԱՏԱԽ ԳԻՒՂ

Հարսանիքի յիշատակութիւն մը գտած չենք: Ձեռքի տակ ունինք միայն «Շատախցոց պարերգ» մը, որուն մէջ շատախցի հարսը իր հագուստ-կապուստն ու զարդեղէնները կը թուէ: Ուրեմն, Շատախի հարսանիքէն ծուէն մը լոկ, զոր կը հրամայենք:

Շատախցիներու պարերգ

Ուշիկ քալայ վեր պաղին,
Ճանիման, ճանիման (կրկնել),
Ձրնկնի կոտրի սաչ-պաղին
Սաչ-պաղու նոթն ա իջէ,
Ոսկերիչ Վանայ իկէ:

Մատնիկ շինայ իմ մատին,
Քեամար շինայ իմ մէջին.
Բըլագուկ շինայ իմ ձեռքին,
Խըզմա շինայ իմ քթին,
Գինտեր շինայ իմ ակնջին,

Մաղչա շինայ իմ նակտին.
Թասը մը շինայ իմ գլխին,
Վզնոց շինայ իմ վզին.
Սաչ-պաղ շինայ իմ ծամին,
Խալխալ (մանեակ) շինայ իմ ոտքին»⁴³.
քին⁴⁴:

ԲԱՂԷԾԻ (ՊԻԹԼԻՍ) ԵՒ ԱՆՈՐ
ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԲԱՂԷԾԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Կը նկարագրէ Գէորգ Ս. Մարգարեանի «Բարքեր ու սովորութիւններ Բաղէշի մէջ» խորագրով:

42 «Բիւզանդիոն», Կ. Պ., 1887, թ. 76-77:
43 «Բիւզանդիոն», Կ. Պ., 1887, թ. 76-77:
44 «Բիւրակ», Կ. Պ., 1898, էջ 558:

Գաւառի համայնքներու մէջ ամուսնական տարիքը թեւակոխող աղջիկ ու մանչ զաւակներու ծնողքները իրենց դիրքին եւ զաւակներու տարիքին յարմար ամուսիններ գտնելու պէտքը վաղուց կը սկսին հոգածութեան առարկայ ընել... Հոգածու մայրը իր զաւակին ապագայ երջանկութեան հեռանկարով զբաղելու հոգը ոչ մեկուն կը վստահի... Յաճախ յանգէտս իր ամուսնոյն եւ ամուսնանալիք զաւակին, զաղտնօրէն կը հետամտի գտնելու իր սրտի հատորին ընկերը ու երբ վերջապէս աղջիկ մը հաճոյ թուի իրեն, կը ջանայ ամուսնոյն հաւանութիւնն ալ ձեռք բերել, պաշտօնապէս աղջիկը ուզելու համար:

Աղջկատես. Հարսնցու աղջկան մը բախտը յաճախ կը վճռուի նախ եկեղեցիներու մէջ, ուր ամուսնացած հարսերն ու մանկամարդ աղջիկները... երթալու իրաւունք ունին միայն Ս. Մնունդին ու Ջատկին... Յետոյ բաղնիքներուն մէջ եւ վերջապէս ուխտատեղիներու, ցերեկոյթներու ու երեկոյթներու մէջ:

Խօսքկապ. - Նշուած վայրերու մէջ տեղի ունեցած անպաշտօն տեսակցութիւններէ վերջ ալ տուններու մէջ է, որ տեղի կ'ունենայ խօսքկապի պաշտօնական արարողութիւնը, դարձեալ կիներուն միջեւ: Փեսացուին մայրը 2-3 ազգականուհիներու հետ կը դիմէ հարսնացուին տունը, գրպանները ուռեցուցած մրգեղէններով կամ շաքարով, զոր պիտի բաժնէ տան պզտիկներուն: Այցելուհիներու ներկայութիւնը անակնկալ մը չէ տիրուհիին, որ պատրաստ է սիրալիր հիւրընկալութիւն ընծայելու... Խօսակցութիւնը կը սկսի անշահ նիւթերու շուրջը...

Վերջապէս երեւան կու գայ օրիորդը, վարանոտ ու շիկաղէմ... Ձեռքազար, յետոյ ապագայ կեսուրին կողմէ առաջարկուած կարգ մը նպատակաւոր սպասարկութիւնները աւելի կամ նուազ ճարտարութեամբ կատարելէ վերջ՝ Հարսնացուն... գլխահակ

ու մեկուսի, ոտքի վրայ ու անխօս ... իր բախտին վճռին կը սպասէ: Վերջապէս եթէ օրիորդը ... իր մարմնական շնորհով ու առաւելութեամբ յաջողած է առինքնելու ապագայ կեսուրը եւ երկուստեք հաւանած են խնամական կապով միանալու, խօսքկապը կը նուիրագործուի աղջկան շոյալուած համբոյրներով եւ անոր մատը անցուած մատանիով մը... Խօսքկապէն վերջը միայն հիւրերը կը մեծարուին սեղանով մը, ուր օղին ալ երբեմն իր զուարթացուցիչ դերը կը կատարէ: Միջակ դասակարգին մէջ խօսքկապէն վերջ հիւրերը միայն թէյով մը կը հիւրասիրուին:

Նշանօրհներ. Խօսքկապէն շաքար մը վերջ նշանօրհնէքի արարողութիւնը կը կատարուի կամ Ազգ. Առաջնորդարանի եւ կամ եկեղեցիին մէջ, երկու կողմի մօտաւոր ազգականներու ու կնքահօր ներկայութեամբ: Կը նախագահէ Առաջնորդը կամ տաներէցը: Խնամիներու տուներէն զրկուած մեկ երկու տեսակ անուշեղէնները եւ նոյնքան ալ շիշ օղի բաւ նկատուած է սարքելու այդ օրուան սեղանը: Փեսային հօր կամ մեծ եղբոր կողմէ նուիրուած նշանը օրհնուելէ վերջ կը յանձնուի հարսը ներկայացնող խումբի գլխաւորին: Ի՞նչ է այդ նշանը. - Գունազարդ փայլուն թուղթով պատմած գլուխ մը շաքար, որուն կոնածեւ գագաթէն մետաքսեայ երիզով մը կախուած են մեկ քանի զարդոսկիներ, որոնց քանակութիւնը եւ արժէքը համեմատական է փեսային նիւթական կարողութեանը:

Հինադրոճք. - Երբեմն, երբ նշանածները տակաւին հասուն տարիքի մէջ չեն գտնուիր, պսակադրութիւնը կը յետաձգուի տարի մը, որուն ընթացքին մանչուն պարագաները պարտաւորուած են 3-4 անգամ այցելելու հարսին, որուն ամեն անգամ ալ մէյմեկ նուէր կը տրուի... Փեսան հագուեցնելու գործողութիւնը շոյալից ծափերու եւ գեղուն բարեմաղթութեանց մէջ կը կատարուի...

Պսակադրութեան նախընթաց օրը, շաբաթ երեկոյ, հրաւիրեալները հետզհետէ կը հաւաքուին: Հարսանեկան խրախճանքները փեսայի տան մէջ աւելի խանդավառ են: Գիշերուան ժամը 1-ին կը կատարուի հինադրօնքի արարողութիւնը, որուն պարտին մասնակցել բոլոր երկսեռ հրաւիրեալները, ձեռքերնուն մեկ մասը, գոնէ մեկ մատը ներկելով շողուած հինայով, զոր տնեցիներէն մին կարգով կը ներկայացնէ իրենց: Փեսային երկու ձեռքերն ալ արդէն իրենց բնական գոյնը կորսնցուցած են... բուսային ներկին թանձր խաւի մը ներքեւ:

Փեսագոյնը. — Կիրակի կէսօրէ վերջ ուրախութիւնները կը վերսկսին: Թմբուկին ու գուռնային ճիչերուն մէջ Հարսնեւորները կը պարեն զանազան պարեր՝ Կովընտի, Խըռփանի, Շորոր, Թեւախաղ, Թենլոր, եւ այլն — որոնց մէջ էն ճարտար Հանդիսացողը՝ պարերուն վարիչը, Կովընտի-Պաշին կ'ըլլայ: Մերթ կը մասնակցի նաեւ փեսան: Գիշերուան ժամը 1-ին հրաւիրեալներու ներկայութեան փեսան ածիլելու արարողութիւնը կը կատարուի: Գրեթէ բոլոր Հանդիսականները այդ պահուն ձեռքերին կը կրեն վառուած մեղրամոմեր:

Հանդիսասրահին կենդրոնը ձեռքերին վառուած կերոններ ունեցող 8-10 պատանիներէ շրջապատուած՝ փեսան աթոռի մը վրայ նստած կը սպասէ սափրիչի գալստեան, որ սակայն կը յապաղի, որովհետեւ ածիլին գուլ է, յեսանին իւղը սպառած է. այդ իւղը պէտք է հայթայթուի կնքահօր մեկ նուէրով, որ իսկոյն կը տրուի եւ ածիլին կը սկսի իր դերը կատարել: Ապա փեսան կը հագուեցնեն կնքահօր օգնութեամբ, որ պարտի աջալուրջ հսկողութիւն ի գործ դնել, որովհետեւ ճարպիկ Հանդիսականներէն մեկուն կողմէ փախցուած հագուստի ոեւէ կտորը ձեռք բերելու համար պիտի ենթարկուի տուգանքի:

Հարսնաւ. Գիշերուան ժամը 3-ին հարսին ծնողքին կը զրկուի նամակ մը, որով

խնամական այս նոր բարեկամութեան առիթով ջերմ մաղթանքներ ընելէ վերջ՝ փեսան կը ծանուցանէ հարսը եկեղեցի առաջնորդելու համար Հարսնեւորներու գալստեան ժամը, որ ընդհանրապէս երեկոյեան ժամը 5-6 կ'ըլլայ: Երկսեռ Հարսնեւորները իրենց ամենէն թանկագին զգեստներով պճնուած՝ կը պատրաստուին ճամբայ ելլելու որոշուած ժամուն: Բազմաթիւ լապտերներէ զատ, բոլոր Հարսնեւորները ձեռքերին կը կրեն յատկապէս պատրաստուած հաստ մեղրամոմեր: Յանկարծ Հարսնեւորները դէմքերնուն վրայ պողջուրի կաթիլներու անկումը կը զգան, որ մեկնումի նշանն է: Փեսան շրջապատուած տարեկից երիտասարդներէ Հանդարտ կը յառաջանայ՝ ստիպուած ըլլալով յաճախ խմելու բարեկամներու տուններէն հրամցուած ըմպելիքներէն: Ծամբու ամբողջ տեւողութեան ցնծութեան աղաղակները գիշերուան հմայքը կը կրկնապատկեն:

Հարսին բնակարանին մէջ պատշաճ մեծարանքով կ'ընդունին հիւրերը, որոնցմէ իգական սեռը ուրոյն հիւրասրահ մը կ'առաջնորդուի, այնպէս շաքարեղէններով ու ըմպելիքներով պատրաստուած սեղանի մը շուրջ: Տեղական հարսանիքի մը միջոցին իգական սեռին ուրախութեան վայելքը այդ պահուն է, որ ի յայտ կու գայ... Արական սեռէն այս սեղանին կը մասնակցին միայն փեսան, կնքահայրը, փեսային եղբայրը կամ ամենամօտիկ ազգականներէն մեկ երկուքը յատուկ հրաւերով:

Հարսին հարսանեկան արդուզարդը աւարտած է գորովոտ խնամքներովը իր մօրը կամ քոյրերուն, որոնցմէ չ'ուզեր բաժնուիլ խեղճ աղջիկը եւ մօրը գիրկը յորդ արցունքներ կը թափէ...

Պսակ. Միեւնոյն Հանդիսաւորութեամբ, որով եկած էին փեսային տունէն, Հանդիսաւորները այս անգամ տարբեր ճամբայէ մը եկեղեցի կ'առաջնորդեն հարսը վրան կարմիր կտաւով պատած բալխի-

րով մը, մինչ փեսան հետիոտն կ'ընթանայ առջեւէն: Պսակադրութեան Ս. Խորհուրդին աւարտումէն ետքը բոլոր հարսնեւորները կ'ուղղուին դէպի փեսային տունը, ուր դարձեալ կիներու յատուկ սեղան մը շտկուած է խնամքով եւ մեկ երկու ժամ կերուխումէ վերջ՝ հարսին պարագաները կը վերադառնան արշալոյսի առաջին շողերուն հետ, թողնելով հարսին քով իր փոքր եղբայրը կամ քոյրը: Ուրախութիւնը կը շարունակուի երկուշաբթի ալ մինչեւ երեկոյ ժամը 12, երբ հարսանիքը կը վերջանայ⁴⁵:

ՏԱՓԱԽԱՆՔ ԳԻՒՂ

Բաղէշի (Պիթլիս) Խլաթ գիւղախումբին կը պատկանի Տափաւանքը, որուն հարսանիքը գրուած է մանրամասն, գիւղի գաւառաբարբառով, 1880-ին, Ալեքսանդրապոլի մէջ: Կը քաղենք էականը:

Նշանադրութիւն. Բաղէշի շրջանին գոյութիւն ունէր խալանը 1880-ին:

Աղջկան հայրը կը պահանջէ մանչուն հօրմէն 500 զուրուշ դրամ, նժոյգ մը, վերարկու մը, մետաքսէ կտոր մը Ֆէսի շուրջը փաթթելու համար: Համաձայնելէ յետոյ իբրեւ նշանադրութիւն հարսնացուին մատը կ'անցնեն մատանի, ականջներուն՝ օղեր, քթին՝ խզմէն, ձեռքերուն ապարանջան, գլխուն՝ մետաքսէ քող (բըլբուլին): Տեղի կ'ունենայ նախ շնորհաւորութիւն օղիով, գինիով, յետոյ ճաշ, որմէ վերջը կը բռնեն Գեօվնդ (ծանր պար), որուն կը մասնակցի հարսն ալ: Ահա այդ պարի երգը.

Խարս քեօ շիւղէն կի զընգընգեայ,
Ես քեօ սիւրուն յիվանդ յընգեայ,
Նշխուն տոտիկ վարտուտիկ (արտոյտ),
Տէսեն վիւ եար խորտիկ:

Դիւս բաց վուարէ (եւ եկու'ր) մարդ եմ ես,
Մեկ լանգեառի (պղնձէ ափսէ) վարդ եմ ես:

45 «Արեւիք», Կ. Պ., 1908, թ. 6761 եւ 6764:

Արեւն առէ կեամբնոց (բանջառանոց)
Քեակեմ գկեոնկնեւ, գեամ ի ծոցս:

Արեւն առէ Խամուր բերթին,
Քեօ սէր թալե մըջ իմ լերթին,
Ես քե սիրենի բօ զձի քերթին:
Նշխուն մեգար խըմըզի (կարմիր),

Պատոխս շըմ առի գըզդի:
Դուն յեղե ես կեթաս կանգեառ (բան ջառեաղի),
Թուխ ծամ յեռեառ խագեալ (խոպոպիկ) խանգեալ,
Ձիս քեօ սիրին գանեն շանգեալ:

Հարսանիքի պատրաստութիւն.

Փեսային հայրը քաղաքէն(Բաղէշ) հարսին համար կը գնէ՝ ջիվբայ, անթարի, շիլլեայ (կարմիր կտաւ), չիթ, միւշասըմ (մետաքսէ թաշկինակ), չօմբար (գլխու համար), սոլ (կօշիկ), Փաս (Ֆէս), տաստըմալ (գլուխը կապելու թաշկինակ), բինիշ (վերարկու՝ խնամիին համար): Հարսանիքի համար հերիսայ կը պատրաստեն:

Պսակ. Ազգայները «Թագուոր»ն ու ազգապաշին կը պատրաստեն «ծառը», կը շինեն «թախտ»ը: Մինչ կը հագուեցնեն փեսան՝ կը գովերգեն «Թագուոր»ը.

Մեր թախտն էր խաշ,
Խաշ կոց, խաշ ու մաշ:
Բինիշն էր կեարմիր,
Արեւն էր կեանանց:

Թախտ, ինչ բերենի քեօ նման
էն պալասունն օրկիւծաղկի,
Մաղկի քեօ արեառ ի նման:

Հարսին Հալաւն ու Հինան կը զրկեն կողովով փեսայի տունէն հարսին տունը. երբ կը հասնին, աղջիկներ դուրս ելլելով կ'առնեն կողովը, կը գնեն իրենց գլխուն վրայ ու կը պարեն «զմիւրգայի պարը» (ծանր մենապար): Հարսնառի կ'երթան բազմութեամբ, տաւուլ-գուռնայով, «Թագուոր»ը միասին տանելով: Քահանան կ'օրհնէ նախ հարսին «Հալաւ»ը եւ երբ

Հարսնացուն կը հագուեցնեն, աղջիկները կ'երգեն՝ լացնելով մայր ու աղջիկ.

Քեօ մէր յէլե սարեր կիւ պտտայ,
Պաղ ջրիկ խըմայ, սրտիկ խովնայ,
Իմ մօր յօւրիչ աղջիկ էլ կեայ.
ընծի ի՞նչ պտի էնայ.
Դու մի՛ լա, խարսիկ, դու մի՛ լա,
Իրիցկիւն դու գգլիւս մը՝ կեայեր...

Վերջապէս պատրաստ են. շարքով, կարգով ճամբայ կ'ելլեն դէպի եկեղեցի. թաշկինակի մը ծայրը հարսն է բռնած, միւս ծայրը՝ փեսան – չըլլայ թէ իրենց մէջէն մեկն անցնի – ու մինչ հարսնառը ծանր ծանր կը քալէ, մանչ-աղջիկ պար են բռնած երգելով.

Նշխուն մեզարով աղջիկ,
Քեօ սէր խազարով աղջիկ,
Նշխուն մեզար ալ պիտ էր,
Թոխ յերեսիս խալ պիտ էր:
Աթլազ ունեմ քեսացու,
Ձի (զիս) գիւզեմ խարսնացու,
Էրնէկ կիտան էն աւտր
Դու իմ խօսու ի փեսացու:

Կը հասնին եկեղեցի. քահանան կը խոստովանցնէ զատ զատ հարս ու փեսայ. կը պսակէ զանոնք ու դարձեալ պարով, խաղալով կը դառնան փեսայի տունը: Հասած դրան առջեւ՝ ազգայները կը սկսին պարել, կատակներ ընել, ատրճանակ պարպել խնդացնելու համար: Յետոյ կը կանչեն «Թագուորի մէջը», որ խաչերկաթը գօտիին զարկած, դոյլը ձեռքը բռնած՝ պարելով ու դոյլը խաղցնելով հարսին առջեւ կ'երթայ ու կ'ըսէ.

Խըշտ (նիգակ) ունեմ,
Խըշտ ունեմ:

Հարսը կը պատասխանէ՝

Խըշտս խըշտիս դեմ կ'ենեմ (կրկ):

Յետոյ կեսուրը երկու հաց բռնած՝ պարելով կը տանի հարսին գլխուն կը դնէ ու կ'ըսէ. «Քեօ ոտն ուղուրով էղի, ղըսմը-թով, դադամով (յաջողակ) էղիս»⁴⁶:

ՄՈՎԱԿԱՅ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մոկաց հարսանիքի մասին գտած եմ միայն պարերգ մը սա խորագրով. «Մոկացի Հայոց հարսանիքի պար», բաւական երկար, որմէ կու տամ մաս մը.

Մոկաց սարեր պէտ պէտ քարեր,
Դի շէր լուացեր, արեւն առեր,
Հելարն իրե, բէրի գահ է,
Ջուաք տարե՛ք ետրոջս, վահ է:

Աչկունմ կուլէ, սիրտն ուրախ էր,
Սըրտին մեռիմ սէր կէր ինե,
Աչից մեռնիմ դեղ կէր ինե...
Տօ, ազաք լան... տօ Մոկացի...

Վայ Մոկացի... թաւ Մոկացի...

Մէր խաբեցիմ սալու լաշով,
Խէր խաբեցիմ թօփ մի շալով:
Եկին եկին Մոկաց խարսներ,
Մոկաց խարսներ երկնուց աստղեր:

Եկին խասանմ մեր նոչ աղբիւր,
Պար բոլորեք գեղի խարսխար...»⁴⁷:

46 Էմիլեան Ազգագրական ժողովածոյ, հտ. 2. Մոսկուա 1906, էջ 387-415:
47 Գ. Վ. Սրուանձտեանց, Համով-հոտով, Տփլիս, 1904; էջ 305:

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄ-ՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ

Գայեան Գեորգեան

Եղանակի քերականական կարգը դրսեւորուում է բայի դիմաւոր ձեւերի միջոցով: Այն անմիջականորէն կապուած է ժամանակի կարգի հետ. «լեզուի մէջ ժամանակային միեւնոյն իմաստն արտայայտող տարբեր քերականական ժամանակների առկայութիւնը մասամբ պայմանաւորուած է վերջիններիս եղանակային պատկանելութեամբ: Իւրաքանչիւր քերականական ժամանակ անպայման ենթադրուում է որեւէ եղանակ: Այլ կերպ ասած, ամեն մի ժամանակաձեւ, բացի ժամանակային իմաստից, արտայայտուում է նաեւ որեւէ եղանակային իմաստ»¹:

Արեւելահայերենի համար տարբերակուում է 5 եղանակ: Ըստ Ջահուկեանի՝ եղանականիշ մասնիկներ են չ(ը) եւ կ(ը) նախամասնիկները: Եղանակային արժէք ունեն նաեւ վերջաւորութիւնները: Նա, նկատի ունենալով բուն եղանակային իմաստները, դրանց հակադրութիւնը արտայայտուում է երկու յատկանիշի օգնութեամբ՝ ցանկականութիւն եւ ուղղուածութիւն, որից յետոյ յաւելում է. «...հրամայականն ու ենթադրականը բնութագրուում են հաղորդողի սուբյեկտիւ ակտիւութեամբ, սահմանականն ու ըղձականը՝ ոչ, ենթադրականը, որպէս որոշակի (հաստատ) եղելութեան արտայայտիչ, ձեռք բերելով ուղղուածութիւն, ստանում է սահմանականի արժէք, ձեռք բերելով ցանկական երանգ եւ ուղղուածութիւն՝ հրամայականի արժէք»²:

Հայերէնի բարբառներում եւս միմեանց հակադրուում է 5 եղանակաձեւ՝ սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական եւ հրամայական: Դրանք հակադրուում են եղանականիշ մասնիկի առկայութիւն-բացակայութիւն յատկանիշով, կազմութեան վերլուծական կամ համադրական տիպով, ինչպէս նաեւ արտայայտած իմաստներով: Նկատելի է, որ արեւելեան խմբակցութեան բարբառները, ի տարբերութիւն արեւմտեանի, յատկանշուում են՝ եղանակային այդ 5 ձեւերի արտահայտութեան եւ բովանդակութեան պլանների համապատասխանութեամբ:

Սահմանական եղանակը տարածքային տարբերակներում եւս, ինչպէս զրական լեզուներում, ցոյց է տալիս «հաղորդողի կողմից հաւաստի համարուող եղելութիւններ»³: Այն բնորոշուում է երեք ժամանակների արտայայտութեամբ եւ վերլուծական ու համադրական ժամանակաձեւերի առկայութեամբ ինչպէս զրական, այնպէս էլ ժխտական խոնարհման յարացոյցներում, սակայն տարբերում է վերլուծական եւ համադրական ժամանակաձեւերի համամասնութեամբ:

Բարբառային միաւորներում սահմանական ներկայի եւ անցեալ անկատարի արտայայտութեան կաղապարային 3 կառոյց է գործառուում՝ դերբայ+օժանդակ բայ, հիմնա-

1 Լ. Յովհաննիսեան, Դասական գրաբարի բաղական ժամանակների կիրառութիւնը, Լեզուի եւ ոճի հարցեր, հտ. 3, Երեւան, 1975, էջ 259:

2 Գ. Ջահուկեան, Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցումը, Երեւան, 1969, էջ 229:
3 Գ. Ջահուկեան, Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները, Երեւան, 1974, էջ 246